


77-84


7785

7786









9 (47.325) ՀԱՏՈՒԱԾՔ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ


ՔԱՂԵԱԼՔ ՅԱՐԱԲԱՑԻ ՊԱՏՄԱԳՐԱՑ

Ի ՀԵԱՆ ՏՈՐԹՈՐ ՄՈՐԹՄԱՆԱՅ ԱՐԵՒԵԼԱԴԵՑԻ

ԹԱՐԳՄԱՆԵԱՑ Ի ՀԱՅ

ԿԱՐԱՊԵՏ Ա. ԻՆԹԻԻՋԵԱՆ

ՏԵՏՐ Ա.



Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ ԼՐԱԳՐՈՑ

Կ. ՊՈԼԻԱ

—1874—

7

13349

ՀԱՏՈՒԱԾՔ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Քաղը է մենուն իւլ Պօլոսան (Քիրտ աշխաբեհակալուաննեանց) անուն պատճունենէ Առուալ Առողոս Ահակար իմամք , որդուայ Եահեայէ , որդուայ Ճառիսէ , ճականուանելոյ իւլ Պետածը օլէ :

Ապուլ Ապագաս Ահմէտ , մականուանեալն իւլ Պէտածօրի , ծնաւ . ի Պաղատատ Հիճրէթի երկրորդ դարուն վերջերը , և մեծ մտերմութիւն ունէք Միւթէվէքքիլ , Մօսթային և Մօաթաղ խալիֆներուն (ամիրապետներուն) հետ : Երրորդն իւր Ապտուլ-լահ որդւոյն դառտիարակութիւնն ասոր յանձնեց .

Ապուլ Ապագաս , վերոյիշեալ պատմութենէն զատ՝ ուրիշ պատմական , աշխարհագրական և բանաստեղծական գիրքեր ալ գրած է , որք կորսըւած են : Իւր կենաց վերջին օրերը՝ խելագարութիւն դալով վրան , ինքինք թունաւորեց Անաքարտիէի (արաքերէն Պէլածօր) պաղով , ուսկից Պէլածօրի մականունը տրուեցաւ իրեն , և մեռաւ Հիճրէթի 279 (Փրկչական 892) թուին :

Աշխարհակալութեանց գլքին արաքերէն բը-

նագերը 1866 ին Հոլանտայի Լէյտ քաղաքը տըպւած է Պ. Ժ. Դոյէ վարժապետին ձեռօք :

ՔԱՂԱԿԱԾՔ

Պէտական գիւղական մշտական երես 193 .

ԱՇԽԱՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆՔ ՚Ի ՀԱՅԱՍՏԱՆ .

Մուհամմէտ, որդի խամայիլի, ըստ պատմութեան բնակչաց Պէրտայի, և ուրիշ անձ մը, ըստ պատմութեան հայազգւոյն Ապու Պէրա Անպասայի որդւոյ Պահրայ, ինչպէս նաև Մուհամմէտ որդի Պիշրի և Քալի, ըստ պատմութեան ծերոց, և Պէրմէդ որդի Ապտուլլահայ Տէպիլիցւոյ, և Մուհամմէտ որդի Մուխայիսի Խիլաթեցւոյ, և այլ քանի մանձինք, ըստ պատմութեան այնպիսի անձանց որք Հայաստանի գործոց ծանօթութիւն ունին, այն երկրին առնուելուն պատմութիւնն ըրին ինձ, և ես ալ այն այլ և այլ պատմութիւնները բաղդատելէ ու քննելէ ետև հետեւեալ պատմութիւնը գրեցի :

Եիմշատ, Գալիքալա (Կարին քաղաք), Խիլաթ, Արճիշ և Պաճօնէի (Բզնունիք) քաղաքները չորրորդ Հայոց մասն են . Պուսֆուրաճանի (Վասպուրականի) գաւառն և Տէպիլ (Դուին), Սիրաճ (Շիրակ), Թէյր և Պակրավանդ քաղաքներն երրորդ Հայոց մասն են . Ճօրծան (Դերջան կամ Թորթան) գաւառն երկրորդ Հայոց մասն են, և Սիսաճանի (Սիսական) և Արրանի գաւառներն առաջին Հայոց մասն են : Ուրիշներ կըսեն թէ Եիմշատ իր շրջականերովը չորրորդ Հայոց մասն է . բայց Գալիքալա, Խիլաթ, Արճիշ և Պաճօնէիս երրորդ Հայոց .

իսկ Սիրաճ—Թէյր, Պակրավանդ, Տէպիլ և Պուստի
Փուրաճան Երկրորդ Հայոց, և վերջապէս Սիսա-
ճան, Արրան և Թիֆլիս առաջին Հայոց։ Ճօրծանի
և Արրանի Երկիրները Խաղարաց (Խաղիրք) ձեռքն
էին. իսկ Հայաստանի միւս Երկիրներն Յունաց
ձեռք, որք կառավարիչ մը դրած էին հոն, որ
Արմէնիաքոս կըկոչուէր։ Խաղարներն յաճախ ար-
շաւանքները ըրին հոն և իրենց ասպատակութիւն-
ները մինչև Տէյնավէր քաղաքը հասուցին(1)։

Գօպատ (Կավատ) որդի Ֆիրուզի (Պէրոզ)՝ թա-
գաւոր Պարսից (2), իր լաւագոյն զօրավարներէն
մին Արրանի Երկիրը զրկեց 12000 զօրքով և նուա-
ճեց. յետոյ նոյն զօրավարը Բաղ (Երասխ) դետին
և Շիրվանի մէջ տեղն եղող բոլոր Երկիրներն ա-
ռաւ : Այն ժամանակ Գօպատ թագաւորն անձամբ
հոն դնաց և Արրանի Երկիրն մէջ Պէյլաքան(3) և

(1) Հայաստանի աշխարհագրութեան այս կարճա-
ռօտ նկարագրին մէջ տեսնուած ամեն սխալներն ուղ-
ղել անօգուտ է. սակայն միտք ունինք ուրիշ տետրակի
մը մէջ Տաճիկ պատմագրաց Հայաստանի աշխարհագրու-
թեան նկատմամբ գրածներէն քանի մը քաղուածներ
դնել և քանի մը խնդրոց վրայ մանրամասնօրէն խօսիլ։

(2) Գօպատ Ա. թագաւորեց 1487 թուէն մինչև 531
սեպտ. 12։

(3) Պէյլաքան քաղաքը Հայերէն Փայտակարանն է,
համանուն գաւառին մայրաքաղաքն՝ որ հիմա աւերակ է։
Այս անսւնն արդէն յիշուած է Ագաթանգեղոսէն եւ
Մովսէս Խորենացիէն, որք Գօպատ թագաւորէն շատ
տարիներ առաջ ապրած են. հետեւարար Պէլաճօրիի տես-
ղեկութիւնը սխալ է։ Բայց շատ յայտնի է որ Արտա-

Պէրտաաա (4) քաղաքներն հիմնեց, որք սահմանաշըլուխ երկիրներուն մայրաքաղաք եղան : Նոյնպէս Քապալա (5) քաղաքը հիմնեց Խաղարաց երկրին մէջ :

Ցետոյ լէթի թումբը (արաբերէն Սէտտ իւլ լէպն) շինել տուաւ Շիրվանի երկրին և Ալէնաց դրան մէջ տեղը, և այն թումբին երկայնութեամբը 360 քաղաք շինեց, որք Պապ իւլ Ապվապի (Դարբանդի) շինութենէն ետեւ աւերակ եղան:

Գօպատի մեռնելէն ետեւ, որդին՝ Անուշիրվան Քէսրա (Խոսրով Ա) գահակալեց (6) : Այս ալ Շապիրան (7) և Մասքաթ (8) քաղաքները շինեց. յեւպատմագրաց Խոլամութենէ առջի ժամանակներու վլոյ տուած տեղեկութիւններն ընդհանրապէս սխալ են :

(4) Ուտի գաւառին մայրաքաղաքը, Հայերէն Պարտաւ, զոր Խորենացին կըյիշէ իր աշխարհագրութեան մէջ ըսելով. «Ուտի առանձնական, յորում Պարտաւ քաղաք»: Այս քաղաքն արդէն յիշուած է սեպածև արձանագրութեանց մէջ, Փարուագու անուամբ. Տես Հայկական սեպածև արձանագրութեանց գրքիս մէջ թիւ. Ճ.Դ.:

(5) Քապալա Շամտխիի արևմտեան կողմն է Կովկասու հարաւային զառիվայրին վրայ. և արդէն Պտղոմէոս աշխարհագրէն ալ յիշուած է Գիրք Ե. Գլ. 12:

(6) Թագաւորեց 551էն մինչև 579:

(7) Շապիրան կամ Շապէրան՝ փոքրիկ քաղաք մ'էր կասպից ծովուն եղերքը, Բագուի և Գարբանտի մէջ տեղը: Արդի աշխարհացոյցներուն մէջ չեմ տեսներ այս քաղաքին անունը:

(8) Մասքաթ անունն արդի աշխարհացոյցներու մէջ չտեսնուիր: Այս քաղաքն ալ կասպից ծովուն եղերքը Շամտխիի և Գարբանտի մէջ տեղը շինուած էր:

տոյ Պապիւլ Ապվապ (դուռն դրանց) քաղաքը շինեց, այս անունը տալով անոր. որովհետեւ կովկասեան լերանց մէջի ճանբուն վրայ էր:

Շինած ամեն քաղաքներուն մէջ ազգ մը դըրաւ, որ Սիասիճան (9) կը կոչուի: Արրանի երկրին մէջ ալ Շէգդէնի (10) և Քամիլէրանի դռներն և Տուտանիէնի (11) դռները շինեց: Կը կարծուի որ այս փոքրիկ ժողովուրդը Տուտանի որդւոց մէն սերեալ է: Ասոնց մէջ ատ Տուրձուսքիէ (12) քաղաքը

(9) Մովսէս Խորենացի. Գիրք Ա. Գլ. 2. (Գեղամ)[՝] սմա (Սիակայ) զմեծ մասն ընչլց խրոց տուեալ, և ծառայս անձինս բազում, սահմանս հատանէ նմա ժառանգութեան ՚ի ծովին ընդ արևելս, մինչև ՚ի դաշտ մի ուր գետըն Երասխ հատեալ զքարանձաւ լերանց անցանէ ընդ խոխում ձիգս և նեղս, ահագին դդչմամբ իջանէ ՚ի դաշտ մի: Աստ բնակիէ Սիակ, լնու շինութեամբ զսահմանս իւրոց բնակութեանն, և զաշխարհն կոչէ իւրով անուամբ րըն Սիւնիք, այլ Պարսք յստակագոյն եւս Սիական կոչեն:

Սիասիճան անունը Պէլածօրիի պատմութեան մէջ յաճախ յիշուած ըլլակուն պատճառաւ, պարտք համարեցանք այս ցեղին ծագումը յիշեցնել ընթերցողաց:

(10) Շէքքէն կամ ըստ այլ պատմագրաց և աշխարհագրաց Շէքքի, Վրաստանի մէջ է կուր գետին և կովկաս լերան մէջ տեղը, Թիֆինջի արևելեան կողմը: Իսկ Քամիլէրան անունը չկրցի բնաւ դանել ուրիշ մատենագրաց մէջ:

(11) Տուտանիէ՝ Արացերէն և Հայերէն Յօթ, Յօթէգիոչուած երկիրն է կուր գետին հիւսիսակողմը, որ յետոց կախէթ կոչուեցաւ:

(12) Տուրցուք Վրաստանի մէջ:

շինեց, որ 42 դուռն ունի, և տմեն դրան վրայ քարէ դղեակ մը: Ճիւրծանի երկրին մէջ ալ Սուկտէպիլ քաղաքը շինեց և Սոքդիանայէն ու ֆարս գաւառէն եկած ցեղ մը բնակեցուց հոն, և այս քաղաքը զինուրական քաղաք ըրաւ: Յունաց երկրին կողմն ալ ճիւրծանի գաւառին մէջ ամրոց մը շինեց և անունը դրաւ Դուռն Ֆիրուզ Գօպատի: յետոյ ուրիշ ամրոց մը շինեց և Դուռն Լատիդայի անուանեց, երրորդ մ'ալ շինեց և Դուռն Պարեգայի անուանեց: այս վերջինը Տրավիզոնի ծովուն վրայ է: Յետոյ Ալէնաց դուռն և Շամշադի(13) դուռը, Ճէրտամանի(14) և Սամշուլտէի(15) ամրոցները շինեց:

Անուշիրվան՝ Յունաց ձեռքն եղած Հայաստանի ամեն մասերուն տիրեց, Տէպիլ(16) քաղաքը նորոգեց և ամրացուց: Պուսֆուրաճանի(17) մէջ

(13) Սամշխէ Վրաստանի մէջ:

(14) Գարդաման Ուտի գաւառին մէջ: Մովսէս Խորենացին իւր աշխարհագրութեան մէջ կըսէ թէ այս այն գաւառներէն մին է զորս Աղուանք առին Հայոց ձեռքէն: Գարդաման նահանգը կուր գետին հիւսիսակողմը կիշնայ, Թիֆլիզի հարաւային արևելեան կողմը, և հիմա կը կոչուի Գարայայի անապատ:

(15) Շամշողէ, Վրաստանի երեք մայրաքաղաքաց մին:

(16) Դուին քաղքին Արաքերէն անունն է: Մովսէս Խորենացին և Փաւստոս Բիւզանդացին՝ այս քաղաքին հիմնադրութիւնը Հայոց Խոսրով թագաւորին կընծայեն:

(17) Հայերէն Վասպուրական: Յունաց պատմիչներն Հայերէնին համաձայն կը դրեն այս քաղաքին անունը. իսկ մեր Արաքացի պատմիչն գործած Պուսֆուրա-

ալ Նէջէվէ (18) քաղաքը շինեց , Վայսի(19) միջնաւ-
թերդն և բազմաթիւ ամրոցներ շինեց Սիսածանի
երկրին մէջ , օրինակի համար Քիլապ և Սահիու-
նէջ բերդերը , և ասոնց ամենուն մէջ Սիսակինի
քաջ և պատերազմասէր մարդիկը բնակեցուց :

Ապա Անուշիրվան գիր գրեց Թուրքաց թա-
գաւորին , և Խաղաղութիւն , հաշտութիւն ու
բարեկամութիւն խնդրեց , և այս գաղափարին
զայն մօտեցնելու համար իր գոտերաց մին անոր
կնութեան տալ առաջարկեց՝ խնամութեամբ կապ-
ւելու փափաք յայտնելով : Այս նպատակաւ իր
կանանց մէկէն որդեգրեալ աղջիկ մը ղրկեց անոր
իրեւ իւր հարազատ դուստրը : Թուրքն ալ աղ-
ջիկն իւր տունն առաւ , և ինքն Անուշիրվանի քով
երթալով , Պէրչէլիէ (20) ըսուած տեղը գտաւ զայն ,
և քանի մ'օրեր մէկաեղ անցուցին՝ իրարմէ գոհ
ըլլալով , և բարեկամութեան փոխադարձ փորձել
տուին իրարու : Յետոյ Անուշիրվան հրաման ըրաւ
իր պահապան զօրաց գունդերէն մէկուն՝ որ գի-
շերը Թուրքին բանակին կողմն երթան և կրակ
վառեն , անոնք ալ ըրին : Հետեւեալ օրը Թուրքե-

ճան անունը Վանայ սեպաճե արձանագրութեանց մէջ
տեսնուած Պուսրարուի անունին կը պատասխանէ : Այս
անունը կը նշանակէ Երկիր մը , ուր հոտաւէտ տունկեր
կը գտնուին , (բոյս և բուրական) : որք անուշ հոտ կը
բուրեն :

(18) Հայերէն Կախջաւան:

(19) Վայոց ձոր Սիւնեաց գաւառին մէջ:

(20) Միրասիտ իւլ իթթիլա կոչուած աշխարհագրական
բառարանին նայելով՝ Արդանի երկրին մէջ քաղաք մ'էր:

ըր գանդատ ըրին Անուշիրվանի , բայց նա ուրացաւ այնպիսի հրաման մը տուած ըլլալը , և մինչև իսկ իր մարդոցմէն մէկուն այնպիսի բան մ'ըրած ըլլալը չդիտնալ կեղծեց : Քանի մ'օր ետքը հրամայեց նոյն զօրագունդին որ կրկնէ նոյն գործողութիւնը , անոնք ալ ըրին : Թուրքերն իրար անցան և նորէն Անուշիրվանին երթալով գանդատեցան : Բայց նա հանդարտեցուց զանոնք 'ի չքմեզս հանելով զինքը , և գործը հետեւութիւն չունեցաւ : Յետոյ Անուշիրվան իր բանակետզին մօտ կրակ վառել տուաւ գիշերն , այնպիսի տեղ մը , ուր քանի մը հիւղակներ միայն կային խոտերէ և արմաւենւոյ ոստերէ շինուած : Երկրորդ օրը՝ Անուշիրվան դանեցատեցաւ թուրքին ըսելով . «Քիչ մնաց որ քու մարդիկդ իմ բանակս պիտի կոխէին , մինչդեռ դուն ինձմէ կասկած ըրիր» : Թուրքն երդումըրաւ որ բնաւ տեղեկութիւն չունէր : Այն ժամանակ Անուշիրվան ըստաւ անոր . «Եղբայր , իմ ու քու զօրքերը չեն գիտեր մեր հաշտութիւնը . հետեւաբար չեն գաղթեր իրարու երկիր արշաւելէ և աւարառութիւն ու թշնամութիւն ընելէ . մեք ալ միշտ կասկածի մէջ պիտի մնանք թէ կրնան այնպիսի դէպէքեր պատահիլ՝ որք մեր բարեկամութիւնն ու հաշտութիւնը աւրեն , և մեր սէրն ու նիզակակցութիւնը նորէն թշնամութեան փոխուի : Ուստի ես կը խորհիմոր թոյլ տաք ինձ իմու քու երկիրներուն մէջ տեղը պատ մը քաշել , և մէջ տեղը գուռ մը շինել , ուսկից ոչ ոք կարենայ իմ կողմէս քու կողմէ և քու կողմէդ ալ իմ կողմն անցնիլ առանց իմ և քու հրամանին : Թուրքը

հաւանութիւն տուաւ և իր երկիրը դարձաւ։ իսկ Անուշիրվան հօն կեցաւ պատը շինելու համար։ եւ ծովուն եզերքէն սկսեալ շինելու ձեռնարկեց քարերով ու կապարով։ լայնութիւնն էր 300 կանգուն, իսկ բարձրութիւնը մինչև լեռներուն կատարը կը համնէր։ Յետոյ նաւերը քար բեռցնելով այն քարերը ծովը լցուց մինչև որ ծովուն մակերեսութիւն հաւասար բարձրութեան հասան, և պատը երեք վարսախ ծովուն մէջ քշեց։ Երբոր լմնցաւ, երկաթէ դուռ մը բացաւ պատին մէջ և պահպանութիւնը հարիւր ձիաւորի յանձնեց, մինչդեռ առաջ այն տեղը պահպանելու համար 50000 զօրք պէտք էր։ Վերջապէս պատին մէջ կամարայարկ պատսպարաններ շինեց։

Այն ժամանակ կըսեն խագանի թէ « Անուշիրվան քեզ խաբեց։ կինդ անոր դուստը չէ, և հիմա ինքինք ամրացուց քեզի դէմ»։ Բայց խագանը կարող չէր բան մ'ընել այս նենդութեան դէմ։

Անուշիրվան բազմաթիւ գլուխներ անուանեց, և իւրաքանչիւրին գաւառ մը յանձնեց։ Այս գըլը լուխներն էին լեռան խագանը, որ գահուն մերձաւոր նախարարներէն էր, և վէճրարզանշահ կը կոչուէր։ Ֆիլանի թագաւորը, որ Ֆիլմնշահ կը կոչուէր։ Թապարսէրանշահ։ Լէկզաց (Լեզկեաց) գլուխը որ ձէրչանշահ կը կոչուէր։ Մասքաթաց թագաւորը, որոյ անուանակոչութիւնը յետոյ ջընջուեցաւ։ Լիրանի թագաւորը՝ որ Լիրանշահ կը կոչուէր, Շիրվանի թագաւորը՝ որ Շիրվանշահ կը կոչուէր։ Պօխի գլուխը՝ որ Պօխաց թագաւոր կը

զոչուեր . Զիրիքիրանի իշխանը՝ որ թաղաւորի աստիճան բարձրացաւ : Կովկասի գլուխներն ալ իւրենց իշխանութեան մէջ վերահաստատեց, և խաղաղութեան գաշնաղը ու թիւնները ըրաւ անոնց հետ , իրեն հարկ վճարելու պայմանաւ :

Հայաստան Պարսից ձեռքը մնաց մինչև Խաղամութեան ժամանակ : Շատ Սիասիճները թողոցին մեկնեցան իրենց ամրոցներէն ու քաղաքներէն , որք աւերեցան և խաղարաց ու Յունաց ձեռքն ինկան : Յունաց գործերը շատ աղէկ դնացին առժամանակ մը , և Աղդաց թաղաւորներուն պէս եղան (21): Այս գլուխներէն մին՝ Արմէնիաքոս անուն՝ թաղաւորեց Հայաստանի մէջ . անոր մահուանէն ետև՝ Գալի անուն կինը թաղուհի եղաւ եւ Քալիքալա քաղաքը շինեց , զոր Գալիդալէ կոչեց , այսինքն է Ծնծայ Գալիի . քաղքին դռներէն մէկուն վրայ իր արձանը դրուեցաւ : Ժամանակէ ետև Արաքները Գալիդալէ անունը Քալիքալայի (22) փոխեցին :

(21) Այս անունը կուտան արաբացի պատմակիրք Արշակունեաց թաղաւորութեան :

(22) Քալիքալա քաղաքին անունը հայ պատմադրաց և ոչ մէկուն մէջ տեսնուած է . թէսկէտ մեր պատմագրին խօսքերէն այնպէս կը հասկցուի թէ այս քաղաքն Հայաստանի ամենէն նշանաւոր քաղաքներէն մին էր: Արաբ աշխարհագիրը կիմացնեն մեզ թէ այս այն քաղաքն է որ տակաւին արորերէն երգէնէլրում կը կոչուի , այն է Երզըրում , հայերէն կարին , և բլողանդեան պատմագիրներէն ալ Թէ օտօսիւրօյի :

Երբոր Օսման որդի Աֆֆանի Խալիֆ (23) (ամիս
ըստեած) եղաւ, հրաման ըրաւ Մօավիայի, որ այն
ժամանակ իր կողմէ կառավարիչ էր Սիրիոյ Մի-
ջագետաց և այն սահմանագլխոց ամրոցներուն,
Հայաստան դրկել Ֆիլիքիցի Մէսլէմէի որդի Հապի-
պը, որ Սիրիոյ աշխարհակալութեան և Յունաց դէմ
մղուած պատերազմին մէջ մեծ ծառայութիւններ
ըրած էր, որով իր անունն ալ հաճոյապէս ծանօթ
եղած էր Լօմէր և Օսման ամիրապետներուն։ Օսման
հրամայեց Հապիպի որ Հայաստան արշաւէ։ Հապիպ
6000՝ կամ ըստ այլոց պատմութեան՝ 8000 զօրքով
Սիրիոյէն ու Միջագետէն ճանրայ ելաւ և Քաղի-
քալայի առջե հասնելով բանակ դրաւ։ Քաղաքին
պահապան զօրքը դուրս ելնելով Հապիպի վրայ
յարձակեցան, բայց Հապիպ զանոնք վանեց։ Ասոր
վրայ քաղաքին բնակիչներն անձնատուր ըլլալ ա-
ռաջարկեցին ուրիշ տեղ դադինելու կամ գըլխա-
հարկ վճարելու պայմանաւ։ Շատերն Յունաց իշ-
խանութեան ներքեւ եղած երկիրներ դադինեցին։
Հապիպ քանի մամիս քաղաքին մէջ նստաւ իր
զօրաց հետ՝ մինչև որ լուր առաւ թէ Արմէնիքոս
իշխանը մեծ բանակ մը կը դումարէ Ցաճկաց
դէմ, և թէ Ալէններէն, Ապխազներէն և Սէմէն-

(25) Օսման՝ ամիրապետ էր Յէկ թուականէն մինչեւ
656։ Հետեւեալ պատմութիւնը կ'ամբողջացնէ Դառնդի և
Յօհաննէս կաթողիկոսի պատմութիւնները, որք Արաբաց
այս առաջին արշաւանաց վրայ խոտա քիչ տեղեկութիւն
կուտան։ Արաբաց Հապիպ սպարապետին անունը բնաւ
իշուած չէ Հայ սլատմագիրներէն։

տէրի Խազարներէն օդնական զօրքեր միացեր էին
անոր հետ:

Հապիպ իմացուց այս բանը Օսման ամիրապե-
տին և օդնական զօրք խնդրեց : Մօավիայի ալ
աղաջեց որ կրօնական պատերազմի և կողոպուտի
Փափաքող զօրականներ զրկէ իրեն Սիրիայէն
ու Միջագետէն: Մօավիա 2000 մարդ զրկեց, զորս
Հապիպ Քալիքալա նստեցուց՝ բնակարաններ ու
հողնր տալով :

Երբոր ամիրապետը Հապիպի նամակն առաւ,
հրամայեց ֆուֆայի կառավարիչ Սայիտի որդւոյ
Աասսիի որդւոյ Ումէյէի, որ Պահէլ թէպիայի որդի
Սէլմանի հրամատարութեամբ օդնական զօրք զրկէ
Հապիպին: Յիշեալ Սէլմանի մականունն էր Էլ Խոսյիլ
(գերազանց): Քաջ և նշանաւոր պատերազմական
մ'էր: Սէլման Էլ Խայիլ 6000 զօրքով ճանքայ ելաւ:

Այս միջոցիս, Յոյնք և իրենց դաշնակիցներն
յառաջ քալելով Եփրատայ եղերքը բանակեցան.
իսկ Հապիպի օդնութեան դնացող զօրքերն ուշա-
ցան: Սակայն Խոլամները դիշերանց Յունաց բա-
նակը կոխելով մեծ ջարդ տուին: Հապիպի կինը,
Ումիմ—Ապտուլլահ, որ Քէլպիէն Եէղիտի դուստրն
էր, վաղեց Երկանը քով դնաց և հարցուց թէ
ուր պիտի գտնէին զիրար: Հապիպ պատասխա-
նեց թէ «Յունաց զօրապետին վրանը կամ արքա-
յութեան մէջ»:—Երբոր վրանը հասաւ, իւր կինը
հոն դտաւ:

Սէլման իր զօրագունդով Հայաստան հասած
ժամանակ խոլամնելն արդէն իրենց դործը լըն-
ցուցած էին Յունաց հետ: Սէլմանի զօրքերն ա-

ւարէն բաժին ուղեցին, բայց Հապիպի զօրքերը
տալ չուղեցին : Այս պատճառաւ Հապիպ և Սէլ-
ման գժաեցան իրարու հետ, և քանի մ' իսլամ-
ներ Սէլմանն սպաննելու սպառնալիք ըրին :

Այս վէճին վրայ ամիրապետին տեղեկութիւն
դրուելով, նա ալ որոշեց որ աւարը Սէրիացւոց բա-
ժինն է . բայց միանդամայն հրաման զրկեց Սէլ-
մանի որ Արրանի երկիրն արշաւէ :

Ոմանք կըպատմեն թէ Սէլման, Օսման ամիրա-
պետին օրով Հայաստան արշաւեց և շատ կողոպուտ
ու գերի առաւ . յետոյ Հիճրէթի ջզ թուին (Քրիս-
տոսէ 646 տարի ետքը) Օքպայի որդի վէլիտի
քով դարձաւ, որ այն ժամանակ Հատիթհա կ' գըտ-
նուէր Մուսուլի մօտ : Այն ժամանակ վէլիտ գիր
մ' ստացաւ Օսման ամիրապետէն, որ կըծանուցանէր
թէ Մօավիայի տուած տեղեկութեան նայելով
Յոյնք բազմագունդ զօրօք իսլամաց վրայ կը քա-
լէին . ուստի կը հրամայէր որ 8000 մարդ օգնու-
թեան զրկէ Մօավիայի : Այս երկու զօրագունդերը
քանի մ' ամրոց առին, գերիններ բռնեցին, և գե-
րագոյն հրամատարութեան պատճառաւ իրարու
հետ վէճ ունեցան :

Քալիքալայի ծերունիներէն շատեր, ինչպէս նաև
իրենց Աթթափ Սօֆիան Ապու Ասպաղ դատաւորն
և Մօհամմէտ Պին Սաատ՝ Ապտիւլ Համիտ Պին
Ճափէրի պատմութեանց վրայ հիմնելով և այս
վերջինն ալ իր հօրմէն խած ըլլալով կը պատմեն
թէ Հապիպ՝ որդի Մէսլէմէի՝ Տէպիլքազաքը պա-
շարեց . Յունաց Մավրիան զօրապետն Հապիպի վը-
րայ յարձակեցաւ, բայց Հապիպ սպաննեց դայն և

Յունաց բանակը կողոպտեց (24) : Յետոյ Սէլման Հաղիալի քով հասաւ : Բայց աւելի արժանահաւատ պատմութեանց նայելով, Սէլման արդէն Քալիքալյի մօտ միացած էր Հաղիալի հետ :

Մուհամմէտ որդի Պիշրի և իան Վարդ Քալացի՝ Քալիքալյի ծերունիներէն լսելով կըպատմեն թէ Քալիքալա քաղաքն առնուելէ ետեւ միշտ պաշտպանողական վիճակի մէջ դրուած մնաց մինչև որ Հինդիթի 133 (Փրկչ. 750—751) թուին Յունաց կայսրը Մալաթիա քաղաքը պաշարեց, և պարխազները քանդելով, մէջը դժոնուող բորոր Խալամները Միջագետք վրնաեց : Յետոյ գէպի Մէրճ Խւլ Հասսա քալեց, և անկից Գիւսսան (Գուշան) Հայազգիմէն ղրկեց, որպէս զի երթայ Քալիքալա քաղաքը պաշարէ : Այն ժամանակ Քալիքալյի մէջ փոքրիկ զօրախումբ մը կար պահապահն՝ Ապուքէրիմէի հրամանին ներքեւ : Քաղաքին Հայ բընակիչները պարխազը ծակելով դուրս ելան, Գուշանի քով գնացին և անոր զօրքերը քաղաքը մտցուցին : Գուշան՝ քաղաքն առաւ, Խալամներուն մէկ մասը ջարդեց, մնացեալները դերի տարաւ, քա-

(24) Այս պատմութիւնը կը հաստատուի Թէօֆան Յոյն պատմագրին հետևեալ տողերովը . [Երես 523 տը պագր. Պօննի]:

«Արաբաց Համիզ զօրապեաը Հայաստան մտնելով յունական զօրաց հրամատար Մավրիանոս զօրապեաը մինչև կովկաս հալածեց և երկիրն առպատակեց»: Տես նաև Միակլա պատմագրիր գիրք իԱ. գլուխ 4 : Այս Մավրիանոս զօրապետին կնիքն իմ որդւոյս Տոքիթ. Աօրթմանի հաւաքածոյից մէջ կը դտնուի :

զաքը կողոպտեց, և բոլոր աւարը կայսեր զրկեց.
իսկ գերիներն իր ընկերաց հետ քայնեց (25) :

Վաքըտի կըսէ. Հիճրէթի 139 (Փրկչ. 756—757)
թուին Մանսուր ամիրապետը՝ Քալիքալայի գերի-
ներէն ողջ մնացածները դնեց, քաղաքը նորոգեց,
գնած գերիները նորէն հոն զրկելով քաղաքը շեն-
ցուց, և Միջազետէն և ուրիշ դաւառներէ զօրք
զրկելով՝ պահապան դրաւ հոն:

Մութասիմ Պիլահ ամիրապետին օրով (26) Յու-
նաց կայսրը նորէն Քալիքալայի վրայ քալեց, և քա-
ղաքին պարիսպները զարնելով՝ գրեթէ բոլորովին
քանդեց: Մութասիմ 500000 տրամ արծաթ ծախք
ընելով՝ քաղաքին պարիսպները նորոգեց:

Հապիալ, Քալիքալա քաղաքը նուաճելէ ետեւ,
դէպի Մարդալա (27) քալեց, ուր Խիլաթի (28)

(25) Յօհաննէս կաթողիկոս բնաւ չյիշատակեր Յու-
նաց Կոստանդին Կոստանդին կայսեր այս արշաւանքը.
իսկ Նեռնդ պատմադիր կըյիշատակէ՝ այնպիսի պարա-
գաներով զրու մեր այս պատմիչը նշանակած չէ: Թէօ-
ֆան ալ այսպէս կըյիշէ. «Նոյն տարին, այն է աշխար-
հի ստեղծման 6243 կամ Փրկչ. 752 թուին, Կոստանդին
կայսրը Թէոդոսուալովիս և Մելիտինէ (Երզրում և Մա-
րտիս) քաղաքներն առաւ և հայերը գերի վարեց:» Տես
նաև Աշտրէնի հատ. 2 երես 40, և Յօնարան գիրք ԺԵ
Գլ. 6 :

(26) Մութասիմ Պիլահ թալաւորեց Փրկչ. 833 թի-
ւէն մինչև 841 :

(27) Ուրար բնադիրը Մէրսէլա կամ Մէրեալա կըսէ.
բայց որովհետեւ Հապիալ Կարինէն դէպի ՚ի վանայ ծովա-
կը քալեց, յայտնի է որ Տուրուրեանսց գաւառէն ան-

Հայ իշխանն իր քով եկաւ իյատ Պին Ղանէմի մէկ գըսպը, որ անոր անձին՝ ստացուածոյն և երկրին ապահովաւթիւն կը ջնորհէր՝ իրեն հարկատու ըլլալու պայմանաւ :

Յետոյ Հապիալ՝ Հէրէք (29) և Ցէլթիւլվէրք (30) նահանդաց մէջ տեղը հասնելով, հոն Խիլաթի իշխանը զինքը դիմաւորեց և իւր կարողութեան չափով ընծայներ մատոյց, բայց Հապիալ չընդունեց, Խիլաթ դնաց և անկից . . . (31) (անվերծանելի անուն մը), ուր Մոդսի (Մոկաց) իշխանն իւր քով եկաւ : Մոդս՝ Պուսֆուրաճանի դաւառին մէջ նահանդ մ'է : Հապիալ՝ երկրին սեփականութիւնն

ցաւ, որոյ մէջ Մարդաղի անունով նահանդ մը կայ, ուստի պէտք կըլլայ Արարերէնը Մարդալա կարդալ փոխանակ Մէրպալայի կամ Մէրեալայի :

(28) Խէլաթ, Խիլաթ, Ալսլախ, որ Տուրուրերան դաւառին Բղնունի նահանդին մայրուքաղաքն է վանայ ծովակին եղերքը, հին Հայ պատմադիրներէն յիշուած չէ; Այս անունն առաջին անդամ Ղևոնդի պատմադրութեան մէջ կը տեսնենք:

Իյատ որդի Ղանէմի, Միջաղետաց և Հարաւային Հայաստանի երկիրները նու աճող Արար աշխարհականն է:

(29) Տուրուրերան դաւառին Հարք նահանդն է:

(30) Հաւանականաբար նոյն դաւառի Տասնաւորք նահանդին անունն է:

(31) Արարացի գըերուն կէտերը մոռցուած ըլլալուն պատճառաւ՝ անունն անվերծանելի է : Ո տառով կըսի և կրնայ Սիրանէ կարդացուիլ յանուն Սիրան Եւրան՝ որ Խիլաթէն Արճէշ երթալու ճանրուն վրաց է :

Մոդս քաղաքը վասպուրական դաւառին մէջ չէ, այլ Մոկաց դաւառին :

անոր շնորհեց, և խաղաղութեան ու ապահովութեան դիր մը տալով իր տեղը ճանքեց :

Յետոյ Հապիալ իր զօրաց մէկ մասն Արծիչի և Պաճօնէիսի (32) գեղերը զրկեց, որպէս զի գրաւեն և բնակիչներէն հարկ հաւաքեն : Գեղերուն գրւեխներն եկան զինքը գտան՝ հողային տրսց վըրոյ բանակցելու : Սակայն Հապիալ որոշում մը չըրաւ վանայ ծովուն համար, որ արարերէն նօհայիրէ իւլ թիրիս (Ազի ձկանց լիճ) կը կոչուի, և հասարակաց սեփականութիւնն մնաց մինչեւ Մուհամեմէտ Պին Մէրվան ստիկանին օրով, որ Միջագետաց և Հայաստանի կառավարիչն էր, և վանայ լճին ձկնորսութեան իրաւունքը վաճառերով կառավարական հասոյթ մ'ըրաւ. Ժամանակէ մ'ետքըն ալ որդին Մէրվան բոլորովին գրաւեց այն հասոյթը:

Հապիալ հոնիկէց Ազարիսաթ (Աշտիշատ) գնաց, որ Գարիէ էլ Գիրմիզ ալ կը կոչուէր, և Քրդաց գետն (Նէհր իւլ էհրատ) անցնելէ ետև մտաւ Տէպիլի գաշտը, ուր իւր ձիերն արածելու զրկեց, և ինք արշաւանքը շարունակելով հասաւ Տէպէլի (Գր-

(32) Եթէ Պաճօնէիս քաղաքին թէ՛ հոս և թէ՛ գլոխայն սկիզբը յիշատակուելուն կարգին կարեղութիւնն արտիի պէտք կըլլայ Արծէշի և Կըլինի մէջ տեղը փընտուելի և այն ժամանակ Վասովուրականի Բաժունիք նաև հանգն եղած կըլլայ: Սակայն Միրասիտ իւլ իմթթիլա կոչաւած աշխարհագրական բառգիրքը կըսէ թէ՛ Պաճօնէիս Խիլաթ նահանգին մէկ մասն է, և այն ժամանակ կը նշանակէ Բզնունեաց նահանգը, որոց անունով վանայ լիճը Ծով Բզնունեաց ալ կը կոչուի:

վին) առջեւ, որոյ բնակիչները՝ քաղաքին մէջ տմբանալով նետեր արձակել սկսան իր վրայ: Հապիալ քաղաքին առջեւ բարան մը կանգնելով խոշոր քարեր արձակեց անոնց վրայ, մինչեւ որ անձնատուր ըլլալու խնդիր ըրին, և ինքն ալ ընդունեց: Զիերը գումարելէ ետև ձօրնի (33), Աշուչ 34), Ցաթ իւլ Լիւճում (35), ձէպպէլ Քիւրթի (36 և Վատի էլ Ահրար քալեց՝ Տէպիլի բոլոր գեղերը նկատածելով: Յետոյ Սիրաճ—Թէյր (37) և Պակրավանտ (38) նահանգները զօրք զրկեց, որոց նախարարն եկաւ զինքը դատաւ և հետը հաշտութիւն կնքեց այս պայմանաւ որ ամիրապետին հարկ տայ, իսլամներուն հետ սիրով վարուի, անոնց հողեր տայ մշակելու, և թշնամեաց դէմ իրարու օդնեն:

Ահաւասիկ Դվարայ դաշնագրին պատճէնը.

« Յանուն Աստուծոյ դժածին և ողորմածի, այս է դիրն զոր Հապիալ որդի Մէսլէմէի շնորհեց

(35) Հայերէն Գառնի, Երևանայ և Դվինի մէջ տեղը գէպ Արևելք:

(36) Հայերէն Աշոյք, գաւառ Արարատայ, այժմ Սօմալիթ, Թիֆլիսի և Ալէքսանդրաքոլի մէջ տեղը:

(37) Թերեսս Հայ մատենագրաց Վեառն Ծաղկաց կոչածն ըլլայ:

(38) Հայերէն Կոգովիտ կամ Կոյգավիտ գաւառ Արարատայ: Վերջին անունը, Վատի էլ Ահրար, որ « Ազնուականաց ձոր» ըսել է, չկրցի գտնել Հայերէնի մէջ:

(39) Հայերէն Շիրակ, գաւառ Արարատայ: Այս հանդին մայրաքաղաքն էր Անի:

(40) Հայերէն Բաղրեանու, գաւառ Արարատայ:

« Ճեղիկի Քրիստոնէից , Մոդաց և Հրէից , ներկա-
« յից և բացակայից : Զեր անձանց , ընչից եկեղեց-
« եաց , տաճարաց , և ձեր քաղաքին պարխազնե-
« րուն ապահովութիւնը շնորհեցի ձեղ , և դուք
« ապահովեալ էք . և մեք այս դաշնադրութիւնն
« հաստատ պիտի պահենք քանի որ դուք հաճե-
« ցաք և խոստացաք գլխահարկ և կալուածատուրք
« վճարել : Աստուած վկայ է , և իր վկայութիւնը կը
« բաւէ :

« Հապիալ որդի Սէպէմէի լուր կնքով կնքեց
« այս դաշնադիրը : »

Տէպիլէն Հապիալ Նէջէվէ դնաց , զայն ալ նը-
ւաճեց , և Տէպիլցւոց տուածին նման պայմաններ
շնորհեց բնակիչներուն : Յետոյ Պուսֆուրաճանի
նախարարն եկաւ զինքը դտաւ և տարեկան հարկ
մը վճարելու պայմանաւ հաշտութիւն կնքեց իր
բոլոր երկրին , ինչպէս նաև Հէսապիլիէ և Աֆա-
րիսթէ ըսուած երկիրներուն համար :

Անկից Հապիալ Սիսաճան հասաւ , որոյ բնակիչ-
ներն ընդդիմութիւն ըրին , բայց Հապիալ զար-
կաւ ցրուեց զանոնք , վայիսի բերդն առաւ և
Սիսաճանի ամրոցներուն պահուալան զօրաց հետ
հաշտութիւն կնքեց՝ հարկ ստանալու պայմանաւ :

Յետոյ քալեց ձիւրծանի երկիրը : Տէպիլի ձե-
րունիներն և անոնց հետ Պէրմէք որդի Ապտուլ-
լահայ պատմեցին ինձ թէ՝ Հապիալ որդի Սէպէմէի
ձիւրծանի երկիրը քալեց իր զօրաբանակովը : Եր-
բոր Ցաթ իւլ Լիւճիւմ ըսուած տեղը հասան , ի-
րենց ձիւրէն մէկ քանին ճարակելու զրկեցին , վը-
բայի ծածկոցներն ու կազմածները տեղ մը դու-

մարելով: Բայց յելուզակներու խումբ մ'անոնց քով
հասնելով պահապանները վռնտեցին, կազմածներ-
ըն ու ծածկոցները և կրցածնուն չափ ալ ձի յա-
փշտակեցին տարին: Բայց խղամմերն ետ դառ-
նալով կուիւր նորոգեցին և այն առնուած բանե-
րուն ամենն ալ ետ առին: Այս պատճառաւ այն
տեղը Յաթ Խւլ Հիւծիւմ կը կոչուի, այսինքն է
«տեղի ձիակազմածոց»:

Ասոր վրայ, ձիւրծանի նախարարին և բնտկ-
չաց կողմէն գրով պատգամաւոր մ'եկաւ Հապի-
պի, և հաշտութեան ու ապահովութեան դաշ-
նագրութիւն մը խնդրեց: Հապիպ հետեւալ պա-
պախանը դրեց անոնց .

«Զեր պատգամաւորն իմ քով և հետո եղող
«Խղամմերուն քով հասաւ, և դուք հասկցաք որ
«մեք այնպիսի ազգ մ'ենք, զոր Աստուած պատ-
«ւեց ու նշանաւոր ըրաւ, և մեք փառք կուտանք
«Աստուծոյ՝ այսպէս ընելուն համար: Աստուած օրհն-
«անէ իւր Մուհամմէտ մարդարէն: Դուք կը յայտնէք
«մէ մեր հաշտութիւնը կըսիրէք: Զեր ընծան հա-
«սաւ և ես ալ ընդունեցի իբրև թերհաշիւ ձեր վը-
«ճարելիք դլիսահարկին: Զեղ ապահովութիւն շը-
«նորհեցի և այս ապահովութիւնները կարդադրե-
«ցի: Եթէ ընդունիք դործը լմացած է. եթէ ոչ,
«պիտի պատերազմինք ձեզ հետյանուն Աստուծոյ
«և իւր մարդարէն: Աղջոյն անոնց որ խրատ կըն-
«դունին»:

Յետպէ Հապիպ թիֆլիզ գնաց, և հետեւալ դի-
րը տուաւ երկրին բնակիչներուն.

«Յանուն Աստուծոյ դթածին և ոզորմածի: Այս

«Ե գիրն՝ զոր չապիս որդի Մէոլէմէի տուառ թիֆա
պիզի, Մէնճելիսի, Ճօրծանի և Գիրմիզի բնակչաց,
«իրենց անձին, ընչից, տաճարաց, վանօրէից, աղօ-
«թարանաց և կրօնից ապահովութեան համար, այս
«պայմանաւ որ զիրենք ստոր ճանչեն և խրաքան-
«չիւր ընտանեաց հայր մէկ գենար տուրք վճարէ:
«Ներելի չէ ձեզ բազմութեամբ տուներու մէջ լքց-
«ւիլ գլխահարկը նուազեցնելու համար, ինչպէս
«որ ներելի չէ միւնոյն ընտանեաց անդամները
«բա ժնել՝ գլխահարկն աւելցնելու համար։ Մեր
«պարտքն է ուսուցանել ձեղ և պաշտպանել ընդ-
«դէմ թշնամեաց Աստուծոյ և նորա մարդարէին,
«երբոր հնազանդ էք։

«Իսլամն իրիկունն աղքատը իր տունը պիտի հը-
«րաւիրէ, և ինչ կերակուր որ Ս. Գրոց հաւատացող
«մարդոց ներելի է, այն կերակուրը պիտի տայ ա-
«նոր։ Եւ երբոր իսլամ մը հիւանդութենէ ստիպ-
«ւեալ ձեր տունը մնայ, պարտաւոր էք զայն բը-
«ժշկել՝ իսլամաց մէջ սովորական եղած արժանա-
«գոյն գնով։ Եթէ մեր հաւատքն ընդունիք և մեր
«աղօթքները կատարէք, մեզի եղբայր կըլլաք ա-
«պա թէ ոչ, գլխահարկ կը վճարէք։ Եթէ իսլամ
«ներն ուրիշ զբաղմունք ունենալով չկրնան ձեզ
«պաշտպանել և ձեր թշնամիները ձեղ յաղթեն,
«այս գաշնազրութեան դէմ գործուած չհամար-
«ւիր։

«Ասոնք են ձեր իրաւունքն ու պարտիքը։
«Աստուած և խր հրեշտակները վիտյ են, և այս
«վկայութիւնը բաւ է։» (39)

Հապիս նուաճեց նաև ձօվախ , Քէսֆէրնիս ,
Քիսալ , Խունան , Աէմսախի , Ճէրտէման , կիւշ-
թասֆի , Շաւշէթ և Պագէլիթ (40) , որք առանց
ընդդիմութեան հնաղանդեցան , այս պայմանաւոր
իրենց բնակչաց արիւնէն հրաժարին , իրենց պա-
րիսպներուն ու ազօթարաններուն մէջ հանդարտ
մեան , և գլխահարկ ու կալուածառուրք վճարեն :
Նմանապէս հաշտութիւն կնքեց Քլարճէթի , Թրի-
ալէթի , Գախեթի , Գուխէթի , Արթահանի (41) , և Ա-

պիտի տանք Թապէրի պատմագրէն առնլով : Աէնձէլս
բառը Մինկրէլի տեղ դրուած ըլլալն յայտնի կը տես-
նուի :

(40) Այս երկրակալութեանց մեծ մասը Վրաստա-
նի արևմտեան կողմերն եղած են մինչև Զէրքէղաց եր-
կիրը : Երկու երեք անուն միայն երկրայելի են և դը-
ւարաւ ստուգելի .

Ձօվախ . Հայերէն ջտսախ :

Քէսֆէրնիս և Քիսալ երկրայելի են :

Խունան , Կուր գետին վրայ հին բերդ մը , Տիկիսիսի
հարաւային արևելեան կողմը :

Աէմսախի , Հայ . Ամմցխէ , Վրաստանի Գարտուէլ
գաւառին մէջ :

Ճարտէման , Հայ . Գարդման , Ուտի գաւառին մէջ :

Կիւշթասֆի , թերևս Քուհշաօթ , Վրաստանի մէջ :

Շաւշէթ , Կուրիէլ գաւառին մէջ :

Պագէլիթ , Հայ . Բաշալէթ , Վրաստանի մէջ :

(41) Քլարճէթ , Հայ . Կղարջք , Գուդարք գաւառին
մէջ , այժմ Քարտուէլ :

Թրիալէթ , Թուեզք , նոյն գաւառին մէջ :

Գախեթ , գաւառ Վրաստանի , Թիֆլիսի արևել-
եան կողմը :

լէնայ գրան բնակիչներուն հետ վերջապէս խանարիէներն (42) ու Տուտանիէներն ալ հարկատու ըլլաւ :

Երբոր Օսման ամիրապետը Քէպրա էլ Պահէլիի որդի Սէլմանին հրաման ըրաւ որ Արքանի երկիրն արշաւէ , Սէլման՝ Պէյլաքան քաղաքը գանադրութեամբ նուաճեց , և բնակիչներուն կենացն , ընչիցն և քաղաքին պարխապներուն ապահովութիւն շնորհեց , դլխահարկ և կալուածատուրք ստանալու պայմանաւ :

Յետոյ Սէլման Պէրտասա եկաւ , և իր բանակը Թօրթուս (43) գետին վրայ դրաւ , որ Պէրտասայի մօտէն կանցնի : Բնակիչները քաղքին դռները փակեցին իրեն դէմ : Սէլման՝ քաղաքը պաշարեց և գեղերն ալ ասպատակներ զրկեց , որ կապտեն : Բայց երբոր արտերուն բերքերը հասունցած էին և հունձքըն ալ պիտի սկսէր , Պէրտասայի բնակիչներն հաշտութիւն կնքեցին Պէյլաքանի պայմաններով , և քաղքին դռները բացին : Սէլման քաղաքը մտաւ , և հոն նստելով իր ձիաւոր զօրքերը զրկեց որ Շաքշին , Մէսքուան , Ուց , Մասրապան , Հէրմէլիան և Թօպաղ (44) նահանգները նուաճեն :

Գուխէթ , Վրաստանի մէջ :

Արթահան , Արտահանք , Գուգարք գաւառին մէջ :

(42) Մովսէս Խորենացին կըսէ . Ծանարք , յորում Աղուան դուռն :

(43) Այս գետն հիմո Թէրթէր կը կոչուի , եւ կուր գետը կը վազէ :

(44) Այս ամեն անուններն Ուտի գաւառին մէջ են , զոր Աղուանք Հայոց ձեռքէն առած էին :

Նմանապէս Արդանի ուրիշ նահանգներն ալ նուածելով՝ Պէլատան կոչուած ցեղին Քուրդերը խոլամութեան հրաւիրեց : Բայց անոնք պատերազմի ելան իրեն դէմ, և յաղթուելով, ոմանք գլխահարկ վճարել յանձն տռին, ոմանք ալողորմութիւն տալու հաճեցան , բայց այս վերջիններուն թիւը քիչ էր :

Պէրտասյի բնակիչներէն շատերու վկայութեան նայելով, Շէմքուր (45) քաղաքը հին է : Սէլման զօրք զրկեց որ զայն նուաճեն : Շէմքուր նուաճւելէ ետև՝ քաղաքին բաղմամարդութիւնը շարունակեց մինչև որ Սալէրտիէներն (46) տռերեցին :

Հաքշն , Հայ . Շիկաշէն :

Մէգրուան , Հայ . Մէծ կալիանք :

Աւց կամ Ուտ , Հայ . Ուտի տռանձնական :

Մասրապան , Մարծանան կամ Մէծ իրանք :

Հէրճէլիան , Հայ . Զարջլանք :

Թօպազ , Հայ . Յուլացեան :

Այս նահանգները Տփխիսի և Պարտաւի մէջ տեղն են կուր գետին երկու կողմը :

(45) Շէմքուր , Գանձակէն 40 մղոն և Տփխիսէն 43 մղոն հեռաւուրութեամբ քաղաք մը :

(46) «Գիրք Կլիմացից» կոչուած Արարերէն աշխարհագրութիւնը զոր Ապու Խոհագ Ել Խմթախորի արար հեղինակը զրած է տասներորդ դարուն մէջ , և 1839 ին կօթթայի մէջ տպուած և 1845ին իմ ձեռօքու Գերմաներէնի թարգմանուած է , հետեւեալ հատուածը կը պարունակէ (Արար բնադրին 83 և թարգմանութեան 90 եւթեսին մէջ) :

«Պէրտասյէն և Շէմքուրէն անդին Հայ ժողովուրու

Սավերտիէները փոքրը ժողովուրդ՝ մ'են, որք իսէ-
յիտի որդի Եէղիտ ոստիկանին Հայաստանէն մեկ-
նած միջոցին երևան ելան, և այս պատճառաւ
Հայաստանի գործերը շփոթեցան և աղէտներն ա-
ւեցան :

Յետոյ քաղաքը նորոգուեցաւ Պօղա ոստիկա-
նէն, որ Մութասիմ Պիլլահ ամիրապետին ընկերն
էր Հիճրէթի 24) թուին (Փրկչ. 854—855) և ետքն ալ
Հայաստանի Ասրպատականի և Շիմշաթի կառա-
վարիչ եղաւ։ Պօղա՝ քաղաքը շէնցնելու համար խա-
զար գաղթականներ դրաւ հոն, որք իսլամու-
թեան կրօնքն ընդունած էին. նմանապէս Պէրտա-
ացի վաճառականները բնակեցուց հոն, և այն ժա-
մանակէն յիշեալ քաղաքը Միւթէվէքքէլիէ կոչ-
ւեցաւ :

Յետոյ Սէլման այն կողմը քալեց, ուր Արաք-
սէս դետը կուր դետին կըխառնուի Պէրտիճէն(47)
անդին, և կուր դետն անցնելով Քապալա քաղա-
քը նուաճեց, Շէքքէնի և Քամիպէրանի (48) իշ-
մը կայ Սիսէրտիէ անունով, որք անգործ, սրիկայ և ա-
ւազակ մարդիկ ենու»

Նոյն գրքին մէկ ուրիշ բնագրին մէջ, որ 1870ին Պ-
Ղույէի ձեռօք տպուած է, այս հատուածը չիայ : Կո-
կը կասկածիմ որ Սիսէրտիէ անուան ներքեւ Մովսէս
Խորենացւոյն յիշած Սկայորդիները ծածկուած ըլլան:

(47) Միւրասէտ իւլ Խթթիլա աշխարհագրական բառ-
գըրքին նայելով, Պէրտիմ՝ կուր դետէն շըջապատեալ
քաղաք մ'է Պէրտաայէն 14 փարստիս հեռու :

(48) Քամիպէրան անունն արդէն յիշուած է Հայաս-
տանի աշխարհակալութեանց գլխոյն սկիզբը : Թէ՛ այն

խանաց հետ հաշտութիւն կնքեց հարկ ստանալու
պայմանաւ : Խայզանի բնակիչները , Շիրվանի թա-
գաւորն և լեռանց ուրիշ թագաւորներն , ինչպէս
նաև Մասքաթի , Շապիրանի և Պապ քաղաքին
բնակիչներն հաշտութիւն կնքեցին անոր հետ .
բայց յետոյ իրենց դուները դոցեցին անոր դէմ:
Խագանն ալ Պուլզարաց գետին ետևէն անոր վը-
րայ յարձակեցաւ , և Սէլման 4000 խամաց հետ
սպաննուեցաւ , կոտորածին ժամանակ խլամներն
Աստուծոյ փառաբանութիւն կերգէին : Սէլման՝
Քուֆայի առաջին դատաւորն էր : Քառասուն օր
դատարանը կընստէր , բայց դատ վարող չկար որ
մորիկ ընէր : Ռւըիներ այս բանը էօմէր Խաթթա-
պի համար կը պատմեն : Խան Ճումանէ Պահէլի՝
այսպէս կըսէ Սէլմանի և Միւսլիմեան Գօթայիպա-
յի համար :

«Երկու գերեզման ունինք , մէկը Պուլզարիոյ
«մէջ , միւսը Զինաստանի . երկու շիրիմ , ո՞վ ըն-
«թերցող : Զինաստանի շիրիմն իր բնակչին աշխար-
«հակալութիւնները կը նշանակէ . միւսն ալ անձրե-
«ւի կաթիներէն կըթրջի :

Սէլման՝ Պուլզարաց վրայ արշաւած ժամանակ՝

և թէ ներկայ պարբերութիւններէն կը հասկցուի որ
Քամիսէրան դաւառը կուր գետին և կովկասի հարա-
ւային զգուիվայրին մէջ տեղը պէտք է վնտուել : Սոյն
անունը կամ ասոր նման անուն մը կը դանենք հայկա-
կան սեպաճև արձանագրութեանց մէջ , ուր Հավարիս
որդի Գուրիսի կը պատմէ թէ Պէրտասա քաղաքը նուա-
ճերէ ետև Խամրիթներուն երկիրն ալ ասպատակեց ու
նուաճեց :

ընկերակից ունէք Անսարիէ Քաապի որդին Քազ-
ցա , որ անոր մահուան լուրն Օսման ամիրապետին
բերաւ :

Իսկ Հապիակ , իր Երկրակալութիւններն աւար-
տելէ ետև տեղեկադիր մը գրեց Օսման ամիրա-
պետին : Այս տեղեկադիրը Սէլմանի մահուան գոյ-
ժին հետ հասաւ : Ամիրապետը դիտաւորութիւն
ունէք Հապիակն ընդհանուր Հայաստանի կառա-
վարիչ անուաններու . բայց յետոյ որոշեց Սիրիոյ
և Միջադետաց սահմանադրուխները դրկել զայն՝
կրօնական պատերազմ ընելու . իսկ Հայաստանի
սահմանադրխոց կառավարիչ կամ սոտիկան ան-
ուաննեց Հու Եէման Ապսիի որդին Հուզէյֆէ , և
դրկեց 'ի Պէրտաա . միանգամայն Պէրտաայի և Քա-
լիքալայի մէջ տեղի բոլոր Երկիրներուն կառավա-
րիչ անուաննեց մինչև 'ի Խայզան :

Ուստի Հապիակի հրաման եղաւ որ ետ դառնայ
և իր տեղն իբրև յաջորդ դնէ Զօֆար Ապսիի որ-
դի Խսալէ , որ իր քով կը դտնուէր : Յետոյ Հա-
պիակ Սիրիա դարձաւ և Յունաց հետ պատերազ-
մելով մինչև Հիմն հասաւ : Մօավիա ամիրապետը
Դամասկոս կանչեց զայն , ուր մեռաւ Հիճրէթի 42
թուականին (Փրկչ . 662) 'ի հասակի 35 ամաց : Մօ-
ավիա՝ Հապիակն Օսման ամիրապետին օդնութեան
զրկած էր Երբոր այս վերջինը պաշարուեր էր :
Բայց Հապիակ վատի էլ Քօրա հասած ժամանակ՝
Օսմանին սպանման լուրն առնլով ետ դարձաւ :

Օսման Ամիրապետը՝ Շուպայի որդի Մօզայիրան՝
Ատրպատականի և Հայաստանի սոտիկան անուա-
նած էր . յետոյ զայն պաշտօնէ ձգելով՝ թէպիայի

որդի Քասիմը Հայաստանի ոստիկան անուաննեց։ Ուշիշներ կըսեն թէ Մօղավիայի Ամր որդին անուաննեց ։ ուրիշներ ալ կըսեն թէ Դիլապեան ցեղէն մարդ մը կարգեց Մօղավիրայի անուանումէն 15 տարի ետքը ։ Յետոյ Էլ Օքայլի անուն մէկը ոստիկան անուաննեց այն երկրին ։ Անկէ ետև Ապութավիպի որդի Ալի (49) ամիրավետը՝ Քայխսի որդի Էշշաթը Հայաստանի և Ատրպատականի ոստիկան անուաննեց ։ Անկէ ետև Մօղավիա (50) ամիրավետը՝ Հաթիմի որդի Ապտուլլահը կարգեց, և ասոր մեռնելէն ետքն ալ Ապտիւլ Ազիզ եղբայրը :

Ապտիւլ Ազիզ՝ Տէպիլի բերգերն ու քաղաքը նորոգեց և մզկիթն ալ մեծցուց ։ Նմանապէս Նէշիվա և Պէրտաս քաղաքները նորոգեց ու ամբացուց ։ Ասոնցմէ զատ Պէյլաքանի շէնքերն ալ նորոգեց ։ Այս ամեն քաղաքներն ալ աւերակ գարձած էին այն ժամանակ ։ Ուրիշներ կըսեն թէ Պէրտապայի շէնքերը Մէրվանի որդի Մուհամմէտ ոստիկանը նորոգեց՝ Մէրվանի որդի Ապտիւլ Մէշիլի քի (51) ամիրավետութեան օրով ։ Վաքէտի այսպէս կըսէ ։ «Ապտիւլ Մէլիք նորոգել տուաւ Պէրտաս քաղաքը Նուման Պահէլիի որդի Հաթիմի կամ անոր որդւոյն ձեռօք»։

Ապտիւլ Մէլիք՝ Վէլիտի որդի Օսմանը Հայաստանի ոստիկան անուաննեց ։

(49) Ալի ամիրավետ թագաւորեց Փրկչ. 654—664 թուականին ։

(50) Մօղավիա ամիրավետ թագ. Փրկչ. 664—684 թուականին ։

(51) Ապտիւլ Մէլիք ամիրավետ թագ. Փրկչ. 684—705 թուականին ։

Զիւպէյիրի որդի Ապտուլլահի (52) ամիրապետութեան օրով Հայաստան ապստամբեցաւ՝ իր նախարարաց դրդութեամբը. բայց Մէրվանի որդի Մուհամմէտ ոստիկանն անոնց յաղթելով, զոմանս սպաննեց, զոմանս գերի բռնեց, և երկիրը նուաճելով, ըսել տուաւ ողջ մնացողներուն թէ Հասարակ զինուորներու թոշակէն բարձր թոշակ իրենց վճարելու միտք ունէր : Ասոր վրայ հայերը Խիլաթի նահանգին եկեղեցիները դումարուելով դռները գոցեցին անոր դէմ: Բայց Մուհամմէտ զանոնք պաշարելով սպառնալիքներ ըրաւ : Այս արշաւանաց մէջ էր որ Խոչիտի որդի Եէղիտի մայրը Սիսաճաններէն բռնուեցաւ, որ Խիլաթի նախարարին դուստրն էր (53):

Ապտիւլ Մէլիքի որդի Սիւլէյման ամիրապետը (54) Ամիրայեան Ատիի որդի Ատին Հայաստանի ոստիկան անուաննեց : Ասոր հայրը՝ Ամիրայեան Ատի՝ այն մարդոցմէ մին էր, որք Ալի ամիրապետը թողլով Ռաքքայի անձնատուր եղան :

Ապտիւլ Աղիզի որդի Խօմէր Բ ամիրապետը (55) Հաստատեց զԱտին Հայաստանի ոստիկանութեան պաշտօնին մէջ : Պէլաքանի գետը մինչև այսօր այս

(52) Ապտուլլահ ամիրապետ թագ. Փրկչ. 680—684 թուականին :

(53) Այս ապստամբութեան վրայ Խօսած է Ղեռնդ պատմագիր, բայց Յօհաննէս կաթողիկոս չխօսիր :

(54) Սիւլէյման ամիրապետ թագ. Փրկչ. 714—719 թուականին :

(55) Խօմէր Բ ամիրապետ թագ. Փրկչ. 717—719 թուականին :

ոստիկանին անուամբ Ատի կը կոչուի : Ուրիշներ ալ
կըսեն թէ խօմէր Բի անուանած ոստիկանն Ատի
չէր, այլ Նումանի որդի Հաթիմն էր . բայց այս ծա-
նօթութիւնը ճիշդ չէ :

ԱպտիւլՄէփքի որդի Եհղիտ Բ ամիրապետը (56)
Խոսֆար Պէհրանիի որդի Միլաքը Հայաստանի ոս-
տիկան անուանեց . յետոյ զայն ետ կանչելով, Ամր
Ելթայի որդի Հարիթը կարգեց: Այս վերջինը պա-
տերազմ ըրաւ Լէկղաց հետ և Հասամտանի (57)
Նահանգը նուաճեց : Յետոյ Ապտուլահ Հէքէմիի
որդի Ճէրրահ՝ Հայաստանի ոստիկան ըլլալով Պէր-
տաս դնաց: Զափուց և կշռոց տարբերութեանց
վրայ Խոսք ըլլալով իրեն, իրաւանց և արդարու-
թեան համեմատ կարգադրեց այս դործը, և նոր
շափեր ու կիրոներ սահմանեց, որք իր անունով
Ճէրրահի կոչուեցան, և մինչև այսօր Հայաստանի
բնակիչները զանոնք կը դործածեն: Ճէրրահ՝ կուր
և Սամուր գետերն անցնելով Խազարաց երկիրն
արշաւեց, և մեծ ջարդ տուաւ անոնց : Յետոյ
Համզինի բնակչաց հետ պատերազմեցաւ, և հաշ-
տութիւն ընելով Խայզանի դաւառը փոխադրեց
զանոնք և երկու դիւդ տուաւ բնակութեան: Յե-
տոյ Կիւմիդի բնակչաց վրայ երթալով դերիներ բըռ-

(56) Եեղիտ Բ. ամիրապետ թագ. Փրկչ. 749—723
թուականին :

(57) Ապու Խոհաք Խոժախրիի աշխարհագրութիւնն
այս նահանգը Համիշտան կը կոչէ : Նոյն աշխարհագրու-
թեան մէկ Պարսկերէն ձեռագիրն ալ Ճէսիմտան կը կո-
չէ : Հաւանական է որ Լէղկեաց Քանրիճան դաւառն
եղած ըլլայ կասալից ծովուն եղերքը :

նեց ու ետ կարձաւ : Յետոյ ԶԵՐՔԵՆԻ ԵՐԱՎԵՐԸ ԳԵՐ-
ՆԱԳ, և իր բանակը ՊԵՐՄԱՍՅԻ և ՊԵՐՄԱՔԱՆԻ ձմե-
րոցները ղըկեց :

Խազարք՝ Արաքսէս գետն անցնելով Հայաստան
արշաւեցին, բայց ՃԵՐՐԱԿ անոնց դէմ ելնելով
կոռուեցաւ Վարդանայ(58) դաշտին մէջ, և Խազարք
Երտէպիլի շրջակաները քաշուեցան : Սակայն ՃԵՐ-
ՐԱԿ՝ Հայաստանի սահմանագլխէն չորս փարսախ
հեռու անոնց ետևէն հասնելով, երեք օր կըռ-
ւեցաւ և ինքն ու զօրքերը մարտիրոսական մահ-
ւամը մեռան : Այս պատճառաւ այն գետը ՃԵՐ-
ՐԱԿ կոչուեցաւ, որոյ վրայ կամուրջ մը շինել աը-
ւած էր :

Յետոյ Ապտիւլ ՄԵԼԻՔԻ որդի Հիշամ(59) ամի-
բապետը Ապտիւլ ՄԵԼԻՔԻ որդի ՄԵԼԻՄԵՆ Հայաս-
տանի սատիկան անուանեց, և անկէ առաջ Ամրի
որդի Սայիթը ղրկեց Խազարաց դէմ, որք վար-
դան քաղաքը պաշարած էին : Սայիթ վանեց զա-
նոնք, և Ատրազատականի ՄԵՐՄԵՏ նահանգը քաշ-

(58) Վարդան քաղաքն Արաքսս (Երասխ) գետին
եղերքը շինուած էր ՊԵՐՄԱՆԷՆ Երտէպիլ ԵՐՄԹԱԼՈՒ
ճանրուն վրայ, ՊԵՐՄԱՆԷՆ Շ փարսախ և Երտէպիլէն
22 փարսախ հեռաւերութեսմը : Այս հաշուով Վարդան
քաղաքին տեղը կընայ ճշգիւ որոշուիլ . այսինքն ղրեթէ
այն տեղն է, ուր Փիրէրթի աշխարհացոյցն Ամթան կոչ-
ուած աւերակները կը նշանակի : Մովսէս Խորենացիի
աշխարհագրութիւնը Փայտակարան գաւառին մէջ Վար-
դանակերտ քաղաք մը կը յիշէ, որ անշուշտ այս է :

(59) Հիշամ սմիբապետը թագ. Փրկչ 724—743 թւ-
ւականին :

ուեցան : Երբոր Ատրպատական քալելու և անոնց դէմ պատերազմելու կը պատրաստուէր , Մէոլէմէ ոստիկանէն դիր մ'ըստացաւ , որ կը յանդիմանէր զինքը թէ իր հասնելէն առաջ խաղարաց վրայ քալեր էր , և կիմացնէր թէ զօրաց դերագոյն հրամատարութիւնը Միւլիմի որդի Ապտիւլ Մէլիքի տրուած էր : Երբոր Սայիտ զօրաբանակը դումարած էր , Մէոլէմէի զրկած պատգամաւորը դայն շղթայի զարկաւ և Պէրտաա զրկելով բանտարկեց : Խաղարք՝ Մէոլէմէէն հալածուելով ետ դարձան , և Մէոլէմէ տեղեկագիր զրկեց Հիշամնյ : Ամիրապետը պատասխանեց . «Դու զանոնք տեսնելէ եւ առեւ Մէյմէտ թողուցիր , և հիմա աշխարհի ծայրը կերթաս փնտուել »: Եւ հրաման զրկեց որ Սայիտը բանտէն արձակէ :

Մէոլէմէ՝ Խայզանի բնակչաց հետ հաշտութիւն կնքելով , հրամայեց որ քաղաքն ամրացնեն , և իրեն համար ալ կալուած առաւ , որ հիմա Հառով Խայզան կը կոչուի :

Լերան թագաւորները , Շիրվանշահ , Լիրանշահ , Թապէրուէրանշահ , Ֆիլանշահ , Ճարչանշահ , ինչպէս նաև Մասքաթի իշխանը զինքը բարեւելու եկան :

Յետոյ Մէոլէմէ՝ Պապ քաղաքին վրայ դնաց ու նուաճեց : Բերդին մէջ հաղար ընտանեաց հայր կայր Խաղարներէն : Մէոլէմէ բերդը պաշարեց և քարեր ու պարսաքարի ձեռով թափուած երկալթներ արձակեց անոնց վրայ , բայց բան մը չկըցաւ ընել : Այն ժամանակ բերդին ջրանցքին աղբիւրը փնտուեց , և եզներ ու ոչխարներ մորթել տալով ,

անոնց աղիքն ու աղտեղաւթիւնները մէջը ձգեց ,
այնպէս որ հետեւալ օրը ջուրը հոտեցաւ և որ-
դերով լցուեցաւ : Խաղարք գիշերուան մութին
օդնութեամբ բերդէն գաւրս ելնելով փախան : Այն
ժամանակ Մէլէմէ՝ 24000 Սիրիացի բնակեցաւց
Պատ իւլ Ապվապ քաղաքին մէջ , պարգևներ խռո-
տանալով անոնց : Տակաւին այսօր ալ Տէրպէնտի
պահապան զինուորները թոյլ չեն տար պաշտօնա-
տարի մ'իրենց քաղաքը մտնել , մինչև որ ստակ
շբաշխէ իրենց : Մէլէմէ ցորենի և գարիի համ-
բարանոցներ և զինարան մը շինել տուաւ հոն :
Ասոնցմէ զատ քաղաքը նորոգեց ու զարդարեց :
և բերդին ջրամբարներն ալ հոգով լցուց :

Մէլէմէի հետ էր Մուհամմէտի որդի Մէրվան,
որ յանկարծակի խաղարաց վրայ հասնելով մեծ
ճակատամարտ մը տուաւ և յազթեց անոնց :

Մէլէմէէն ետեւ , Հիշամ ամիրապետը՝ Սայխա
էլ Հարաշին Հայաստանի ոստիկան անուանեց : Սա-
յիտ երկու տարի սահմանագլուխը կեցաւ : Յետոյ
Մուհամմէտի որդի Մէրվան՝ Մարաց ոստիկան ե-
ղաւ և Գիզալ գնաց , որ Պէրտաայէն 40 փարսախ
և Թիֆլիզէն 20 փարսախ հեռաւորութեամբ քա-
ղաք . մ'է , և նորոգեց զայն : Յետոյ Ալէնաց գըու-
նէն խաղարաց երկիրը մտաւ , Ապու Եէզիտ իւ-
սէյիտն և Տէրպէնտի մօտակայ լերանց թագաւար-
ները հոն զրկեց , և խաղարաց երկրին մէջ Սըրա-
վաց գաւառն ասպատակելով 20000 գերի բերաւ
գախէթ , ամենն ալ ընտանեաց հայրեր : Անոնք
ալ իրենց հրամատարն սպաննելով փախան , բայց
Մէրվան ետենուն հասնելով շարգեց զանոնք :

Խաղարաց թագաւորը Մէրվանի պյուղէս յառախ իր երկրին մէջ ըրած ասպատակութիւններն իմանալով և անոր զօրաց թիւն ու զօրութիւնն ըստուգելով՝ սիրտն երկիւղ մտաւ : Մէրվան պատգամաւոր զրկեց անոր և հրաւիրեց որ կամ իսլամութիւն ընդունի , կամ պատերազմի ենէ իր դէմ : Թագաւորը պատաժանեց թէ իսլամութիւն կընդունի , և խնդրեց որ մէկը զրկէ իրեն խամութիւն սովորեցնելու : Մէրվան կատարեց անոր խնդիրը , և իր թագաւորութեան վրայ հաստատեց . յետոյ ետ դարձաւ՝ բազմաթիւ խաղաներ տանելով իր հետ , զորս Սամուրի և Շապիրանի մէջ տեղը Լէդ-զայ երկրին դաշտերուն մէկուն մէջ բնակեցուց :

Յետոյ Մէրվան Սէրիրի (60) երկիրը քալեց , և յանկարծ բնակչաց վրայ կյանալով քանի մ'ամուր քաղաքաց տիրեց : Սէրիրի թագաւորը խոնարհեցաւ և հաշտութիւն կնքեց՝ տարուէ տարի 1000 դերի տալու պայմանաւ , 500 մանչ և 500 աղջիկ , ու ահեր և մրայօն . ասոնցմէ զատ 10000 դրիւ ցարէն ու դարի Պապի համբարանոցին համար : Այս դաշնադրութեան դործադրութիւնն երաշխաւորելու համար պատանդներ տրուեցան :

Մէրվան՝ թումանի (61) բնակչաց հետ ալ հաշտութիւն կնքեց տարին 100 դերի սաանալու պայ-

(60) Սէրիրի (աթոռ , դահ) երկիրը վալիայի գետաբերանին և Գարբանդի մէջ տեղն էր կասպից ծովուն եզերքը :

(61) Այս տնունը զանազան կերպեւ կընչանակեն առարացի պատմիչք և աշխարհագիրք . Եռուման , Եռունան ,

մանաւ, 50 մմնչ և 50 աղջիկ, ամենն ալ սեահեր և մրայօն, 20000 գրիւ ալ ցորեն, համբարանոցներուն համար :

Յետոյ Զիրիդիրանի (62) երկիրն արշաւելով հաշտութիւն կնքեց տեղւոյն թագաւորին հետ՝ տարին 50 գերի և 10000 գրիւ ցորեն ստանալու պայմանաւ :

Յետոյ Համզինի երկիրը հասաւ, որոյ բնակիչք հաշտութիւն կնքել չուղեցին : Մէրվան անոնց բերդն ամսո մը պաշարելով առաւ, երկիրը հրովու սրով ասպատակեց, և վերջապէս հաշտութիւն կնքեց այս պայմանաւ որ միանգամ 500 գերի տան իրեն, և տարուէ տարի ալ 30000 գրիւ ցորեն՝ Տէրպէնտի համբարանոցներուն համար :

Յետոյ Սէպտան եկաւ, զոր նոյնպէս գաշնագ-

թուման, թոււպան, թոււպար, թույյար: Այս ամեն անուններն ալ սխալ են: այլ սէտք է թուղաղ կարդալ, Ուտի գաւառին մէջ, Պէրտասյի և Պէյլաքանի մէջ տեղը: (Տես մեր Կարդ ծանօթութիւնը) :

(62) Այս երկիրն դրից վրայ ճշմարտանման տեղեկութիւն մը չկրցի գտնել: Պարսկահայք գաւառին մէջ Զարեհաւան անուն նահանգ մը կայ, որ Զիրիդիրան անունին քիչ մը կ'նմանի, մանաւանդ երբոր Զիրիքէվան կարդացուի, որն որ արարերէն դրութեան մէջ անհշան տարբերութիւն մ'եղած կըլլայ: Նմանապէս Մոկաց գաւառին մէջ Զիրիքան անունով նահանգ մը կայ Բաւզէշի և Սղերդի մէջ տեղը: Վերջապէս Վանայ Խօրխօրի սեպաձե արձանագրութիւնները Զիրիազա անուն երկիր մը կըլլիւն, զոր Արկիաթի թագաւորը նուաձերէ: Բայց այս ամեն երկիրներն չայաստանի մասն են, իսկ հովովասի շրջականներն եղող երկիր մը վրայ է խօսքը:

բութեամք նուանեց : Երկրին իշխանը միանդամ 100 դերի պիտի տար իրեն, և տարուէ տարի ալ 5000 դրիւ ցորեն Պապի համբարանոցներուն հաւմար :

Թապարսէրանշահի (63) հաղատակաց վրայ ալ հարկ դրաւ տարուէ տարի 10000 դրիւ ցորեն տալ Պապի համբարանոցներուն *

Բայց Ֆիլանշահին (64) վրայ հարկ մը չդրաւ, որովհետև մեծամեծ և օգտակար ծառայութիւններ մատուցած և գովելի ընթացք մ'ունեցած էր:

Յետոյ Մէրփան լէդզաց բերդին վրայ քալեց, բայց չկրցաւ նուաճնել: Ուստի ետ քաջուեցաւ խաղարաց իշխանը գանելու համար, զոր հովիւ մը չճանշելով նետահար սպաններ էր: Այն ժամանակ Մէրփան հաշտութիւն կնքեց լէդզաց հետ՝ 20000 դրիւ ցորեն հարկ դնելովնոցա վրայ, և խաշրամա Սիւլանին ալ ոսաբիկան կարդեց :

Յետոյ Մէրփան՝ Շիրփանի իշխանին խիրշ անուն բերդին վրայ քալեց, կասպից ծովուն եզրը, Բրնակիչներն հնազանդեցան և դաշտը գաղթեցին: Մէրփան՝ տարին 10000 դրիւ ցորեն հարկ դրաւ անոնց վրայ: Ասկէց զատ Շիրփանի իշխանին վրայ պարտք դրաւ, որ երբ խոլամները խազարաց հետ

(65) Կասպից ծովուն վրայ փոքրիկ նահանդ մէկ դարբանդ քաղաքին և Սամուրա գետին մէջ տեղը: Եղիշ վարդապետն այս նահանդը թափաստարան կը կոչէ:

(64) Խաժախրիի աշխարհագրութեան մէջ այս նաև Համախիի և Քաղալսի մէջ տեղը դրուած է Կովկասի հարաւային զատիվայրին վրայ, այն է՝ այժմեան լահիչ կոչուած նահանդին մէջ :

պատերազմունենան, անոնց բանակին յառաջապահը հըն ըլլայ իր զօրքերով, և երբոր ետ դառնան, վերջապահն ըլլայ: Նմանապէս ֆիլանշահին վրայ ալ պարտք դրաւ որ իր զօրքովն իսրամաց հետ միանայ երբոր պատերազմունենան այն կողմերը: Թապարսէրանշահին վրայ ալ պարտք դրաւ որ իսլամներուն պատերազմի քալած ժամանակ վերջապահ գունդ կազմէ և ետ դարձած ժամանակնին ալ յառաջապահ :

Յետոյ Մէրվան Տուտանիէներուն դէմ ելլթալով, յանկարծ կոխեց զանոնք: Այն ժամանակ իմացաւ Եէղիտի որդի Վէլիտին սպաննուիլը: Նօտյիմ Ճուղամիի որդի թապիթ ապստամբեցաւ վէլիտի դէմ, և Տէրպէնտի կառավարիչ Քասապ Մուսափիր ալ անոր հետ միացաւ: Մուսափիր՝ Հայաստանի և Ատրակատականի ոստիկան անուանեց զթապիթ: յետոյ դաղտնաբար իրտէպիլ եկաւ, ուր քանի մուրիշ հերձուածողներ ալ միացան իր հետ: Անկից ապստամբները Պաճէրվան (65) եկան, ուր դարձեալ ուրիշ հերձուածողք միացան իրենց հետ: Յետոյ վարդան եկան, ուր նոյնպէս բազմաթիւ ապստամբք միացան իրենց հետ: Անկից Պէլլաքան անցան, ուր իրենց թիւն աւելի ըստւարացաւ, և քալեցին . . . (անվերծանելի անուն մը): Մէրվան՝ Միւլիմի որդի իսհաքը Հայաստանի ոստիկան անուանեց: Իսհաք անդադար պա-

(65) Մէր սլատմագրին խօսքին նայելով, Պաճէրվան կամ Պաճրէվան քաղաքն Խրտէպիլէն Պէլլաքան երթալու ճանքուն վրայ ըլլալու է, հետևաբար Արարատայ Բագրէվանդ. նահանդը չնշանակեր հոս:

տերազմեցաւ Մուսաֆիրի հետ , որ Գիլապի բերդին մէջ ամրացած էր :

Այս անցքերուն միջոցին Ամիրապետութիւնը Ապասեանց ձեռքն անցաւ , և Ապուլ Ապաս Սէֆֆահ ամիրապետ (66) ըլլալով , Ապու ձափէր Մանսուրը Միջագետաց և Հայաստանի ոստիկան անուանեց : Մանսուր՝ Մուսաֆիրի և անոր կողմնակցաց դէմ Խորասանցի զօրավար մը զրկեց , որ պատերազմեցաւ անոնց հետ և վերջապէս յաղթելով Մուսաֆիրն սպաննեց : Պէյլաքանի զօրքերը Դիլապի բերդին մէջ ամրացած էին , և գլուխնին էր Ասֆար Պէյլաքանի որդի Քատառ . բայց անձնատուր ըլլալու հարկադրեցան :

Երբոր Մանսուր ամիրապետ (67) եղաւ , իւսէ յիա Սիւլամիի որդի Եէզիթը Հայաստանի ոստիկան անուանեց : Եէզիթ՝ Ալէնաց դուռն առաւ և բազմաթիւ պաշտօնատարներ դրաւ հոն . նմանապէս Խոանարիէները նուաճելով հարկատու ըրաւ : Մանսուրը հրաման զրկեց Եէզիթի որ Խազարաց թագաւորին հետ խնամութեան դաշնակցութիւն մը ինքէ , և թագաւորին աղջիկը կնութեան առաւ , յորմէ արու զաւակ մը ծնաւ , բայց զաւակն ու մայրը մէկէն մեռան ծննդաբերութեան առթիւ (68):

Եէզիթ՝ տեսուչ մը զրկելով նաւթի աղբիւրներն և Շիրվանի աղահանքերը դրաւել տուաւ : Ասկէց զատ՝ Մեծ և Փոքր Էրճիւլ քաղաքներն հիմ-

(66) Փրկչ. 749 թուականին :

(67) Փրկչ. 753 թուականին :

(68) Ղեռնդ պատմագիր մանրամասնաբար կըպատմէ այս իրողութիւնը . բայց Յովի Կաթողիկոս ընաւ չյիշեր:

նեց, և Պաղետախնացի զօրագունդեր դրաւ ա-
նոնց մէջ :

Մուհամմէտ որդի Խսմայիլի՝ Փէրտաայի ծերոււ-
նիներէն լսելով պատմեց ինձ թէ Շիրվանի երկրին
Շամախիա քաղաքն՝ իր անունը Շուճայի որդի Շա-
մախէն առած էր, որ Սալիմեան Սայիտին Հայաստանի
ոստիկան եղած միջոցին Շիրվանի թագաւորն էր :
Նոյն պատմութեան նայելով, Խւաչյիտի որդի Սա-
յիտի և Միւսլիմ Օքայիլիի որդի Պէդդարի պաշ-
տօնանկութենէն ետեւ, երբոր Քահթապա Թայիիի
որդի Հասան Հայաստանի ոստիկան էր, Հայերն ա-
պրստամբեցան : Իրենց գլուխն էր Մուշայիլ (Մու-
շէղ) (69) : Մանսուր՝ օգնական զօրք զրկեց Հասա-
նին՝ Խսմայիլեան Սամիրի հրամատարութեամբ: Հա-
սան՝ Մուշայիլի դէմ ելնելով սպաննեց զայն, և
ապրստամբները ցրուելով խաղաղութիւնը վերա-
հաստատեց : Պէյլաքանի գետը, ինչպէս նաև Պէր-
տաայի մէջ Հասանի ունեցած այդին ու ադարա-
կը՝ Հասանիէ կոչուեցան :

Հասանէն ետեւ՝ Օմարայի որդի Օսման Հայաս-
տանի ոստիկան եղաւ . յետոյ Հաթիմի որդի Ռա-
ուհ, յետոյ Խազիմի որդի Խուզէյմս, Մէզեէտի
որդի Եէզիտ, Մէհամի որդի Ռուզէյառուլլահ, Եահ-
եայի որդի Ֆաթհէլ, Սալիմի որդի Սայիտ, Եէզի-
տի որդի Մուհամմէտ : Այս ամեն ոստիկաններուն
ամենէն զօրեղն էր Խուզէյմա : Տէպիլի և Նէշէ-
վէի երկիրներուն կալուածոց աշխարհագիրը շի-

(69) Մուշէղ Մամիկոնեանի այս ամբստամբութիւնը
մանրամասնաբար պատմուած է Պեռնդ պատմագրէն,
բայց Յովհան Կաթողիկոսէն յիշատակուած չէ :

նել տուաւ , որ մինչեւ իր օրն եղած բան չէր :

Այն ժամանակիները՝ Հայոց նախարարներն իւրենց ամրոցներուն մէջ կը նստէին , և խրաքանձիւրն իւր երկիրը կը պաշտպանէր : Ասոնք՝ իալամ ոստիկան մը սահմանագլխին մօտեցած ժամանակ, երբ կը տեսնէին որ քաջ մարդ էր և հետը մեծ զօրութիւն ունէր , կը հնազանդէին և տուրքերնին կը վճարէին . բայց երբոր հակառակը տեսնէին , կարհամարհէին և բանի տեղ չէին դներ :

Մատուն ամիրապետին օրով, Եէզիտի որդի խալիտ Հայաստանի ոստիկան էր : Այս մարդն Հայոց նախարարներուն ընծայները կը նվազագույն էր և հետերնին բարեկամութեամբ կրաքարուէր : Ասով Հայոց նախարարները զեղծան և խալիտէն ետև Մամունի զրկած ոստիկաններուն թշնամի եղան :

Մօթասսիմ Պիլլահ ամիրապետը՝ Ալի Պատաղիսի որդի Հասանը Մարտց ոստիկան անուանեց : Այս ալ հեղ մարդ մ'ըլլալով, նախարարաց և ազնուականաց հետ քաղցրութեամբ կը վարուէր , այնպէս որ կառավարութեան դէմ անոնց չափութիւնն աւելցաւ և իրենց հպատակները կեղեքել սկսան :

Խամայիլի որդի խհաք՝ Յմիատներուն ընկերը՝ Վրաստանի տիրեց :

Հայոց Սմբատ նախարարին որդին Սէհլ՝ Քառսի որդի Հայտար ոստիկանին դէմ ապստամբեցաւ , և անոր քարտողարն սպաննեց . Հայտար ալ մեծ դժուարութեամբ ազատեցաւ Սէհլի ձեռքէն : Յետոյ ուրիշ պաշտօնատարք Հայտառանի ոստիկան ըլլալով, երկրին բնակչաց սիրտը գըրա-

ւեցին և թեթև տուրք մը դրին անոնց վրայ:

Միւթէվէքքիլ (70) ամիրապետը Եռւսուֆ Մէրուզիի թոռ և Մուհամմէտի որդի Եռւսուֆը Հայաստանի ոստիկան անուանեց իր գահակալութեան երկրորդ տարին: Եռւսուֆ, Խիլաթ համելուն պէս, քաղաքին Աշոտեան Բագրատ անուն իշխանը բըս-նեց և Սուր Մին թայ զրկեց: Հայոց նախարարներն ու աղնուականները դառնապէս վշտացան այս բունական գործին վրայ: Յետոյ Եռւսուֆ՝ Ահմէտի որդի Էլ Ալա անուն պաշտօնատար մը զրկեց Սիսաճանի նահանգին մէջ Տէյր Խւլ Աքտահ (Ոկիհայ վանք) անուն վանք մը, որ մեծ յարդ ունէր քը-րիստոնէից առջե, որք հարուստ նուէրներ կ'զրկէ-ին հոն: Էլ Ալա վանքին մէջ ի՞նչ որ գտաւ կապտեց և բնակչաց դէմ ալ բունաբարութիւններ ըրաւ: Ասոր վրայ նախարարները զայրանալով բանակցեցան իրարու հետ, և մէկզմէկ ապստամբութեան քաջալերելով Խուէթիէ գնացին պահութեացան: Այս ապստամբք Արթան կոչուեցան, և նոյն անձինքն էին որ իրենց Բագրատ իշխանին վերցուելուն պատճառաւ ապստամբած էին Եռւսուֆի դէմ: Ասոնք իրենց բոլոր մարդիկը, հեծեալ ու հետեւակ, ապստամբաց օգնութեան զրկեցին, որք Տարոն գումարեցան, Եռւսուֆի մարդիկը գիւղերուն մէջ ցրուեցին, Եռւսուֆն սպաննեցին, և անոր բանակին մէջ դատածնին կողոպտեցին:

Այն ժամանակ Միւթէվէքքիլ ամիրապետը՝ ոստիկան կարդեց Հայաստանի Պօղա (անդրանիկ)

մականուասեալ) : Այս սոտիկանը Պիթլիս հասնեալ լուն պէս Զօրաբայի որդի Մուսան բռնեց, որ Եռասուֆի սպանուելուն վրայ ուրախացող և Բագրատի դործին մէջ անոր դէմ ելնողներուն մին էր։ Յետոյ Խուիթիէ ապաստանող Հայոց հետ կռուելով, անոնցմէ շատերն սպաննեց և շատերն ալ դերի բռնեց։ Յետոյ Պուսփուրաճանի նախարար Համզաեան Աշոտը Արպագի մէջ պաշարեց և այն տեղէն վերցնել տալով Սուր Մին բայ զրկեց։ Յետոյ Վըրաստան մտաւ, Խամայիլի որդի Խոհաքին յաղթեց, և զայն աչքին առջև մեռցնել տալով Վըրաստանը նուաճեց։ Նմանապէս Արրանի և Սիսաճանի քրիստոնէից և այլ աղանդաւորաց մէջ գտնուած բոլոր ապատամբները վերցնելով, այս սահմանագլուխ երկրին մէջ բարեկարգութիւններ նմանը չը տեսնուած կերպիւ վերահաստատեց, և յետոյ Սուր Մին բայ վերադարձաւ Հիճրէթի 241 (Փրկչ. 855) թուին (71) :

Բուն Հայաստանի աշխարհակալութեան վերաբերեալ գլուխն աւարտելէ ետեւ, քիչ շատ Հայաստանի վերաբերութիւնն ունեցող ուրիշ քանի մը տեղեկութիւններ ալ կը դանենք նոյն հեղինակին պատմութեան մէջ :

Հիճրէթի 15 (Փրկչ. 636) թուին եէրմուգ դետին եղերքն Արաբաց և Յունաց մէջ տրուած մեծ

(71) Այս անցքերը Յալչ Կաթողիկոս ալ պատմած է դր. 13 և 14. Հետեւքար երկու պատմութիւնը իրարկամբողացնեն,

Ճակատամարտն հետեւեալ կերպիւ կը նկարագրէ
մեր հեղինակը :

«Հերակլիս կայսրը մեծ զօրաբանակ մը գուշ-
մարեց Յունաստանէն, Միջագետէն, Սիրիայէն և
Հայաստանէն, ընդ ամենը 200000 մարդ, և ասոնց
հրամատարութիւնն իր խորհրդականներէն մէկուն
յանձնեց: Յառաջապահ դունդը Սիրիացի Արար-
ներէ կը բաղկանար, և հրամատարն էր Էյհամի
որդի ձապալա: Այս բանակը մեծ ճակատամարտ մը
տուաւ Խոլամ արաբաց դէմ Եէրմաւդ դեախն եզ-
րը: Խոլամները 24000 պատերազմող ունէին: Յոյնք
և իրենց դաշնակիցք յաղթուելով 'ի փախուսա
դարձան: Աստուած 70000 մարդ ջարդեց անսնց-
մէ: Թիացեալները Պաղեստին, Անտիոք, Հալէպ,
Միջագետ և Հայաստան քաշուեցան:»

Միջագետաց աշխարհակալութեան դրքէն
քաղուած :

«Հիճրէթի 19 (Փրկչ. 640) թուին, Ղանիմի որ-
դի Իյատ՝ Մէոլէմէի որդի Հապիպը Գարդիսիա
զրկեց, զոր գրաւեց նոյն պայմաններով որ Բօհա
(Եղեսիա) քաղաքը գրաւեր էր: Իյատ՝ Ամիդ. (Տի-
արպէքիր) քաղաքն ալ առանց դիմադրութեան
առաւ նոյն պայմաններով: յետոյ Միաֆարէդին
քաղաքն և Քէֆրթութ ամրոցն ալ նուաճեց նոյն
կերպիւ, և ճակատամարտ մը տալէ ետեւ Մծրին,
Գարտէ և Պէղապտէ քաղաքներն ալ առաւ (Տիգ-
րիս գետին վրայ): Այն ժամանակ Զէվէզանի նա-
խարարն եկաւ զինքը գտաւ, և իր երկրին հա-
մար հաշտութիւն կնքեց հարկատուութեան պայ-
մանաւ: Յետոյ Արանիի նահանդը նուաճեց Մհե-

նի պայմաններով, և կիրճնը էն անցնելով Պիթլիզ
և անկեց Խիլաթ հասաւ, որոյ նախարարն հաշ
տութիւն կնքեց հետո (72): Հապիալ մինչեւ Հայաս-
տանի թթու աղբիւրն հասնելէ ետեւ՝ ետ դար-
ձաւ՝ Հայոց իշխանը պատասխանատու բռնելով
Խիլաթի նախարարին և թափառական ցեղերուն
վճարելիք հարկաց:»

Ատրպատականի աշխարհակալութեան գլուխն
ալ Հայաստանի պատմութեան հետ յարաբերու-
թիւն ունի, որովհետեւ Հայաստանի Պարսկահայք
գաւառն Ատրպատականի մէջ էր: Ահաւասիկ
կարեռը մասերուն թարգմանութիւնը :

«Ամր էրտէպիլիի որդի Հիւսէյին՝ ըստ վկայու-
թեան ծերունեաց՝ պատմեց ինձ թէ Շուապայի
որդի Մուղայիրա՝ Խաթթապի որդի Էօմէր ամիր-
քապետին կողմէ քուֆա գնաց նամակ մը տանելով
իլ Եէմանի որդի Հուղէյֆէի, զոր Ատրպատականի
ոստիկան կանուանէր Էօմէր: Հուղէյֆէ Ատրպա-
տականի Արտաւան քաղաքը գնաց, ուր Պարսիկ
կառավարիչ մը կը նստէր և երկրին տուրքերը կը
հաւաքէր: Պարսիկ կառավարիչը՝ Պաճէրվան(73),
Մէյմէծ, Նէրիր, Սէրաշիզ Միանճ, և այլ քաղաք-
ներէն զօրք հաւաքելով, Հուղէյֆէյի գէմելաւ և
երկար կուիւներէ ետեւ՝ հաշտութեան դաշնադ-
րութիւն մը կնքեց, որոյ դիմաւոր պայմանն ոյս

(72) Հայաստանի աշխարհակալութեան գլուխն մէջ
յիշուած նախարարն է, որ Հապիալ ներկայանալով իր
անձին և ստացուածոց ապահովութեան դիր մը ներ-
կայացուցած էր:

(73) Այս Պաճէրվան կամ Պաճրէվան քաղաքը՝ Հայաս-

էր . Պարսիկները 800,000 դրամ արծաթ վճարեն խալամաց . Խոլամներն ալ բնաւ մարդ չը մեռցնեն , Պարսից ատրուշաններուն բնաւ չդըպչին , Պալածան Սապալան և Փաթրուտան քաղաքները Քիւրդերուն չբացուին , Շիզ քաղաքին բընակչաց արդելք չդրուի իրենց տօներուն ժամանակ արմաւենիներէ տաղաւարներ շիներու և տռաջուան պէս իրենց տօները կատարելու :

« Յետոյ Հուզէյֆէ՝ Մօգանի և Ճիլանի երկիրներուն հետ պատերազմելով՝ անոնք ալ հարկատու ըլլաւ :

« Այս անցքերուն վրայ , Էօմէր ետ կանչեց Հուզէյֆէ , և անոր տեղ Ատրպատականի ոստիկան անուանեց Ֆարքատի որդի Օթպա : Այս նոր ոստիկանը Մուսուլէն Սրտաւան հասած ժամանակ տեսաւ որ բնակիչներն ապստամբած էին իրեն դէմ : Մարտնչեցաւ անոնց հետ , և յաղթելով քաղում աւար առաւ :

« Օթպայէն ետև ուրիշ քանի մը ոստիկաններ եկան Ատրպատական , և յետոյ Օթպայի որդի Վէլիսն եկաւ Քայիսի որդի Էշաթի հետ , և երբոր Վէլիս ետ դարձաւ , Էշաթը ոստիկան անուանեց Ատրպատականի : Ասոր օրով երկրին բնակիչներն ապստամբելով , Էշաթ օգնութիւն խնդրեց Վէլիսն , նա ալ զօրք զրկեց Քուֆայէն : Էշաթ՝ ա-

տանի Արարատ գաւառին մէջի Բաղրեվանդ նահանգը չէ , այլ աւելի արևելեան կողմը՝ Երասխի մօտ տեղ մը ըլլալու է Արտաւանի և Պէլլագանի մէջ տեղը : Ստկայն ուրիշ հեղինակութեանց մէջ այսպիսի քաղաքի մը ամեն նախոքը հետքն անդամ դտած չէմ :

պըստամբներուն ետևէն իյնալով՝ հալածեց, և
չուզէյֆէի և 0թպայի դրած պայմաններով հաշ-
տութիւն կնքելէ ետև՝ բազմաթիւ արարներ բե-
րաւ բնակեցուց երկրին մէջ, և հրաման ըրաւ ա-
նոնց որ բնակիչներն խլամութեան հրաւիրեն :

«Յետոյ Ասսիի որդի Սայիտ ոստիկան անուա-
նելով Մօքանի և ձկանի բնակչաց վրայ գնաց :
Հայոցմէ և Ատրպատականցիներէ բաղկացեալ բա-
նակ մը դումարուած էր Ուրմի (Ուրմիա) և Պէվան-
քէրի մէջ : Սայիտ անոնց դէմ զրկեց Ապտուլլահի
որդի ձէրիր, որ զանոնք ցրուեց, և դլուխնին բըռ-
նելով Պաճրէվանի դղեակին առջև կախել տուաւ :

«Ուրմիա հին քաղաք մէ : Մոգերը կը հաւա-
տան թէ իրենց կրօնին հիմնադիր Զրադաշտ հոն
ծնած էր : Ալիի որդի Սատադա այն քաղաքն առ-
նըլով, դղեակ մը շինեց անոր մէջ :

«Թէպրիզ(Գավրէմ) նախ ըէվվատէլ էղտիի և
յետոյ անոր վէճնա որդւոյն ձեռքն անցաւ, որ
իր եղբարց հետ միաբանութեամբ միջնաբերդ մը
շինեց պարիսպներով, և այն ժամանակ քաղաքը
բնակչօք լցուեցաւ :

«Միանէն և խալպաթա քաղաքներն Համա-
տանցոց կայարաններն են: Միանէճի հիմնադիրն
եղած է Համատանցի ձափէրի որդի Ապտուլլահ .
և Սուլթանն ալ Մինաթէր մը կանգնել տուած է ա-
նոր մէջ:

«Թառւսի որդի Մուաֆի Մւսսուլի ծերունիներէն
լսելով պատմեց ինձ թէ Ուրմիա քաղաքը՝ Ֆէրքա-
տի որդի 0թպայի հրամատարութեամբ Մուսսուլէն
զրկուած բանակի մը ձեռօք նուաճուեցաւ . և ու-

այս քաղաքին տուրքերը Մուսուլ կը տարուէին ,
ինչպէս նաև Հուս, Խոյ և Սալմաստ քաղաքներուն
տուրքերը :

ՔԱՂՈՒԱԾՔ 'Ի ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒ-
ԹԵՆԼ. ԹԱՊԵՐԻՒ .

Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ապու ձափէր Մուհամմէտ, որդի ձէրիրի, ծը-
նաւ թապէրաստանայ Ամուլ քաղաքը , Հիճրէթի
224 (Փրկչ. 839) թուին : Ուրիշ համանուններէ որոշ-
աւելու համար՝ իւր հայրենեց անունով թապէրի
կոչուեցաւ : Ապու ձափէր Մուհամմէտ՝ իւր դա-
րուն ամենէն գիտնական մարդոցմէն մին էր, գըլ-
խառորապէս ջաճկաց կանոնական իրաւագիտու-
թեան (Փիդրի) մէջ, որոյ վերայ քանի մը գիրք
ալ գրած է : Բայց ամենէն աւելի զինքը հռչակել
տուողն իր տիեզերական պատմութիւնն է , որ աշ-
խարհի ստեղծումէն կ'սկսի և մինչև Հիճրէթի 302
(Փրկչ. 945) թուականը կը համնի : Խոկ ինքը մե-
ռած է Հիճրէթի 310 (Փրկչ. 922) թուին 'ի Պաղտատ:

Թոպէրիի տիեզերական պատմութիւնը քանի
մը հատորներէ կը բաղկանայ , բայց մինչև այսօր
դեռ կատարեալ օրինակ մը չգտնուեցաւ ոչ մէկ
գրատան մէջ, այնպէս որ թերի մասերը հետզե-
տէ լրացնելու ջանք կըլլայ : Պարսկերէն թարգ-
մանութեամբ համառօտութիւն մը կայ, որ թուր-
քերէնի թարգմանուելով կ Պօլսոյ մէջ տպուած է,
բայց այս թարգմանութիւնները չեն կրնար բընա-
գըրին տեղը բռնել :

ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԹԱՊԼՐԻՒ

ԱՀԻԱՐԵՆԻՉԼՈՅՆԵՐՆ ԱՐԴԱՊԱՊԻՆԵՐՆ

Նօայիմ, Համատան քաղաքն երկրորդ անգամ
նուածելէ ետև, Վաճ բուտէն թէյ գնաց : Էսմէր
ամիրապետն հրաման ըրաւ իրեն, որ Հարաշա Ան-
սարիի որդի Սիմագն Ատրպատական դրկէ յօդ-
նութիւն Պուքէյիրի : Նօայիմ այս հրամանին կա-
տարումն ետ ձգեց, մինչև որ թէյը նուաճեց: Յե-
տոյ Սիմագ Ատրպատական գնաց Պուքէյիրի քով:
Սիմագ և Աթպապ Ֆէրքատ՝ մեծափարթամ ա-
րաբներ էին, և Քուֆա կը բնակէին իրենց բո-
լոր հարստութեամբ : Սիմագ Պուքէյիրի օդնու-
թեան դրկուեցաւ՝ երրոր այս վերջինն Ատրպատա-
կանի վրայ քալեց: Պուքէյիր Հարմանճանի լեռնե-
րը մտած ժամանակ, թարրախպատի որդի իսֆէն-
տիար ընդդիմացաւ անոր՝ Վաճ բուտէն անցնե-
լով : Այս եղաւ Ատրպատականի առաջին պատե-
րազմը : Սոտուած Պարսիկներն ի փախուստ դար-
ձուց, և իսփանտիար՝ գերի բռնուելով՝ ըսաւ Պու-
քէյիրի. «Ի՞նչ կուզես, խաղաղութիւն թէ պատե-
րազմ»—Անշուշտ խաղաղութիւնն աւելի կը սի-
րեմ: պատախանեց Պուքէյիր:—Ուրեմն զիս քովդ
վար դիր՝ վասն զի՞ եթէ ես կամ եղբայրս հաշ-
տութիւն չկնքենք, Ատրպատականցիք չեն նուա-
ճուիր, շրջակոյ լեռները կը քաշուին, և Յունաց
և արիշ ապստամբ ժողովրդոց հետ կը միանան,
որք իրենց բերդերուն մէջ ամրացած ենք:»

Պուքէյիր ալ վար դրաւ զայն իր քով, և ՚ի
միասին բոլոր երկիրը պատըստեցան, ՚ի բաց առ-

եալ այն կողմերն որ ամրոցներուն պաշտպանուց
թեան ներքեւ էին :

Երբոր իսֆենախար Պուքէյիրի քով գեղի էր ,
Սիմադ հոն հասաւ իր զօրագունդին հետ , և իւ-
րաքանչիւրն իր ճանքուն վրայ եղած երկիրը նը-
ւաճեց : ինչպէս որ Ֆէրգատի որդի Օթպա իր
ճանքուն վրայ գտնուածները նուաճեր էր :

Յետոյ Պուքէյիր հրաժարական տարով Ատրը-
պտտականէն , Էօմէր ամիրապետն հրաման ըրտ
իրեն որ իր տեղը յաջորդ մը գներով՝ Էլ Պապի
(Դարբանդի) վրայ քալէ : Պուքէյիր՝ իր նուաճած
երկիրին կուսակալ տնուանեց զՕթպա , և իսփեն-
ախարն ալ անոր յանձնեց : Օթպա ընդունեց կու-
սակալութիւնը : Սիմադ ալ իւր նուաճած երկիրին
ոստիկան եղաւ : Հետեւաբար ամրողջ Ատրպատա-
կանի երկիրն Օթպայի իշխանութեան ներքեւ դըր-
ւեցաւ :

Բայց Ֆարհանեան Պահրամ Օթպայի ճանքան
կարելով , իւր բանակովն անոր սպասեց : Օթպա
հասաւ , ճակատամարտ մ'եղաւ , և Պահրամ յազ-
թուելով վախաւ :

Իսփենտիար , որ Պուքէյիրի գերիներուն մէջ
էր , այս լուրն առնելուն պէս գոչեց . «Հիմա պա-
տերազմը վերջացած է և խաղաղութիւնը կա-
տարեալ»: Պահրամ հաշտութիւն կնքելով հապա-
տակեցաւ : Զօրքերն Ատրպատական դարձան և
Պուքէյիր և Օթպա տեղեկագիր գրեցին Էօմէր
ամիրապետին , աւարին հինգերորդ մասն ալ ա-
նոր զրկելով :

Պուքէյիր առաջին երկրակալութիւններն ըրած

էր, Օթպա ալ Պահրամայ յաղթելով խաղաղութիւնը լրացուցեր էր : Երբոր Պուքէ յիրի կառավարութիւնն Օթպայի կառավարութեան հետ միացաւ, Օթպա՝ Ատրպատականի բնակչաց հետ ըրած հաշտութեան դաշնագիրը շինեց, որ այս է .

« Յանուն Աստուծոյ դժամճին և ողորմածի : Ահաւասիկ հաշտութեան պայմանները, զորս Էօմէր ամիրապետի կողմէն Ատրպատականի ոստիկան կարգեալ Օթպա որդի Ֆարգատայ շնորհեց դաշտաց, լերանց, արօտավայրաց և անշարժ հաստատութեանց բնակիչներուն : Իրենց անձանց, շարժական և անշարժ ընչից և կրօնին ապահովութիւն, այս պայմանաւոր որ իւրաքանչիւրին կարողութեան համեմատ գլխահարկ վճարեն : Այս հարկէն ազատ են տղայք, կանայք, և աղքատք՝ որ աշխարհային ստացուածք չունին, կրօնականք՝ որք աշխարհիս հարստութիւններէն ու բարիքներէն հրաժարած են : Այս ազատութիւնը շնորհեալ է այն ամեն անձանց՝ որք անոնց մէջ կը կենան : Պայման գորուած է նաև որ իսլամ զօրականները կարենան գիշեր ցերեկ գեղերը բնակիլ, և ուղեցոյցներ տրուին անոնց : Ով որ տարուան մը մէջ իր տուարները կորսնցնէ (համաճարակ հիւանդութեամբ), այն տարին հարկէ ազատ պիտի լինի : Անոնք որ երկրին մէջ մնան և այս պայմաններն ընդունին, ապահովութիւն պիտի վայելեն . նոյնպէս անոնք՝ որ երկրէն դուրս ենել ուզեն, մինչեւ դուրս ելած և ազատ եղած ժամանակնին ապահովութիւն պիտի վայելեն :

«Այս դաշնագիրը ձօնտէպ գրեց, և Ապտուլ-

Հոգն Աէյթիի որդի Պուքէյիր և Խարաշայի Սնուա-
ռիի որդի Սիմագ վկայ են : Գրեալ Հիճրէթի 18րդ
տարին (Փրկչ. 639):»

Նոյն տարին կատարուեցաւ նաև Էլ Պապի (Դար-
բանդի) աշխարհակալութիւնն ալ, ըստ պատմու-
թեան Սէյիփի և այլոց՝ որոցմէ Սէյիփ այս պատ-
մութիւնը լսած էր : Ասոնք այսպէս կը պատմեն :

Խօմէր ամիրապետն Ապու Մասան Պատրա զըր-
կեց . նոյնպէս Ամրի որդի Սիւրաքան : Հրաման ը-
րաւ Ծուլնունի որ Էլ Պապ երթայ . յառաջապահ
զօրաց հրամատարութիւնն ալ թէպիայի որդի Ապ-
տիւրահմանի յանձնեց : Ծուլնուն իր բանակին թե-
ւերէն մին Հուծէյֆա Ղափարիի յանձնեց , միւսն
ալ Ապտուլլահ Աէյթիի որդի Պուքէյիրի , որ ար-
դէն Սիւրաքայի համելէն առաջ Դարբանդի առ-
ջև կը հրամայէր : Սպարապետը նամակաւ մը հը-
րաման զրկեց որ Դարբանդի առջև կենայ . թէ՛
պիայի որդի Սէլմանի ալ հրաման եղաւ որ բա-
նակին կրնակն եղող կիրճերը պահպանէ : Սիւ-
րաքա հրաման ըրաւ Ապտիւլլահմանի որ յա-
ռաջ քալէ , ինքն ալ անմիջապէս անոր ետևէն
ճանրայ ելաւ , մինչև որ Ատրպատականէն դուրս
ելնելով Էլ Պապի հողը հասան : Այն ժամանակ
Պուքէյիրը Դարբանդի բերդին առջև զրկեց : Պու-
քէյիր ճանրայ ելաւ , Էլ Պապի երկիրը մտաւ ա-
միրապետին հրամանաւ , որ Մէսլէմէի որդի Հա-
պիպն ալ իրեն քով զրկեց Միջագետէն :

Երբար Ապտիւլլահման Դարբանդի Շահըրիրան
թագաւորին (որ Խարայէլի օրդիքը Սիրիայէն վը-
ռնաող Շահըրիրան թագաւորին տոհմէն էր) ըը-

նակութեան մօտը հասաւ , թագաւորը նամակ մը
դրեց անոր և աղաջեց որ զինքը տեսնելու դայ :
Ապտիւլը աման ալ անոր քով երթալով , թագաւորն ըստ . շիմ դէմ բազմաթիւ թշնամիներ կան
այլ և այլ ազգերէ , որոց թիւն անհաշուելի է : Ու
ըեմն չվայլեր մեղ հետ այն ազգաց պէս վարուիլ
որոց երկիրներուն մէջ կանոնաւորեալ պայմաններ
կան : Հոս աշխարհակալութեան կամ դաշնադրու-
թեան խնդիր չկրնար ըլլալ : Դուք իմ երկիրու դը-
րաւեցիք , և այսօրուան օրու եւ ձեզնէ եմ . իմ
ձեռքս ձեր ձեւաց հետ է : Իմ համբաւու ծանօթ-
է : Աստուած իր շնորհը չինայեց թէ ինձ և թէ
ձեզ : Մեք ձեր հարկատուն ենք , և ձեր յաղթու-
թիւնը մեղ կարող կընէ ձեր ուզածն ընելու : Մեղ
հարկէ ազատ ըրէք և ձեր թշնամեաց դէմ զըր-
կեցէք :

Ապտիւլը աման պատասխանեց .

«Ես ինձմէ վեր մեծ մ'ունիմ , պէտք է անոր
հաղորդեմ քու առաջարկութիւնդ և անոր հա-
ւանութիւնն ստանամ . բայց հիմակուց քեզ կը
պաշտպանեմ : »

Յետոյ դնաց Սիւրաքայի պատմեց իր այս ուեւ
սակցութիւնը և խորհրդակցեցաւ անոր հետ : Սիւ-
րաքա ընդունեց եղած կարգադրութիւնը , բայց
աւելցուց թէ երկրին մէջ նստող և պատերազմի
չփնացողները պէտք է որ դիմահարկը վճարեն :
Ուստի այն տարին որ կռապաշտից դէմ պատե-
րազմ ըլլար , դիմահարկ չէր ուզուեր և պատե-
րազմի կերթային . իսկ պատերազմ չեղած տարին
կը վճարէին :

Սիւրաքա այս պայմանագրութիւնն էօմէր առ
միրապետին հաղորդեց, նա ալ ընդունելով վա-
ւերացուց :

Անոնք որ այս լեռներուն զառիվայրերուն վրայ
կը բնակին, բնիկ չեն: Հայերն ալ միայն անցու-
դարձ կընեն: Խակ այն բնակիչներն՝ որք հաստա-
տուն բնակութիւն ունին, գեղերուն բնիկներն են.
և անոնք որ բարձրերը կը բնակին՝ իրենց լեռները
կը դառնան, և ամենն ալ այն կողմերը բնակու-
թիւն հաստատելէ կը փախչին: Այս պատճառաւ
զօրականներէ և անոնց ծառայութեան պէտք եւ-
զած կամ հօն ապաստանեալ մարդոցմէ զատ ու-
րիշ բնակիչ չգտնուիր հօն:

Սիւրաքա հետեւեալ դաշնագիրը տուաւ.

«Յանուն Աստուծոյ գթածին և ողորմածի: Այս
են պայմանք՝ զորս շնորհեց Սիւրաքա որդի Ամրի՝
ոստիկան ՚ի կողմանէ գլխոյն հաւատացերց: Էօմէ-
րի որդւոյ խաթթապայ՝ առ Շահրիրան և առ բը-
նակիչս Հայաստանի, և առ Հայս:

« Ապահովութիւն իրենց անձին, ընչից և կը-
րօնին, այնպէս որ Հայաստանի և Դրանց բնակիչ-
ները բնաւ վնաս չկընին: Պայման դրուեցաւ իրենց
հետ, որ ամեն պատերազմներու մասնակցին, դա-
տաւորին (Նայիպ)՝ կամ եթէ դատաւոր չգտնուի՝
կառավարչին (Վալի) ամեն հրամաններուն հընա-
զանգին:

« Անոնք որ այս պայմանը կընդունին, գրւ-
խահարկէ ազատ պիտի մնան, և գլխահարկին
փոխարէն զինուորական ծառայութիւն պիտի ը-
նեն: Սակայն անոնք՝ որ իրենց առնը մնալ կաւզեն,

նոյն գլխահարկը պիտի վճարեն՝ ինչ որ Ապրապատականի բնակիչները կը վճարեն. միանդամայն ուղեցոյցի պաշտօն պիտի կատարեն և ուղեորներն օր մ'եւ գիշեր մը տուներնին հիւրընկալեն :

«Ապտիւլրահման որդի թէպիայի և Սէլման որդի թէպիայի վկայ են :»

Յետոյ Սիւրաքա՝ Պուրքէյիրը, Հապիպը, Հուծէյփան և Սէլմանը Հայաստանի շրջակայ լեռները դրկեց, այսինքն Պուրքէյիրը դէպի Մօգան, Հապիպը դէպի թիֆլիզ, Հուծէյփան դէպի Ալանաց լեռները, և Սէլմանն ուրիշ կողմ : Սիրաքա իր արդէն ըրած աշխարհակալութեանց և այս հըրամայած արշաւանաց վրայ տեղեկադիր մը դըրկեց իօմէր ամիրապետին: Երբոր Ամիրապետն այս լուրերն առաւ, շատ ուրախ եղաւ, որովհետեւ մինչև հիմա ոչ մէկ արշաւանք այսչափ շուտով և այսչափ գոհացուցիչ կերպիւ դլուխ ելած չէր:

Արդարեւ Պարսկաստանի բնակիչներն այս գործերը տեսնելով, պատերազմելէ հրաժարեցան և իսլամութեան իրաւասութիւնն ընդունեցին:

Այն ժամանակ Սիրաքա մեռաւ և տեղը թէպիայի որդի Ապտիւլրահման դրուեցաւ :

Սիրաքայի կողմէ այլ և այլ կողմզդրկուած զօրավարները բնաւ աշխարհակալութիւն չըրին բաց 'ի Պուրքէյիրէն՝ որ դէպի Մօգան կը քալէր. որովհետեւ այս երկիրը գլխահարկ վճարել յանձն չէր առած : Այն ժամանակ հետեւեալ նամակը գրեց անոնց :

«Յանուն Աստուծոյ գթածին և ողորմածի: Այս է դաշնագիրն զոր Պուրքէյիր որդի Ապտուլրահմայ՝

լեռը նուաճելէ ետև շնորհեց Մօգանի բնակիչներուն : Ապահովութիւն իրենց անձին , ընչից , ազգութեան և օրինաց , այս պայմանաւոր որ մէն մի չափահաս մարդ՝ մէկ գենար կամ ոսկիի մ'արժեք վճարէ , իսլամներուն առաջնորդութիւն եւ մէկ օր ու մէկ գիշեր հիւրընկալութիւն ընէ : Իրենց կիյնայ այս պայմաններն ընդունիլ . մեր ալ պարտքն է կատարել : Աստուած օղնական ըլլայ մեզ : Բայց երբոր այս պայմանները լուծեն կամ նենդութիւն մ'ընեն , այն ժամանակ ներում չը պիտի ըլլայ իրենց մինչև որ նենդութիւն ընողները չմատնեն . իսկ եթէ չուզեն մատնել , այն ժամանակ վլէծինդրութիւն պիտի գործածուի իրենց դէմ : Վկայ են Տարարի որդի Շէմաք . Տիշատէի որդի Ռիպաս և Հութիէի որդի Համաշա : Դըրեալ 'ի 21 ամի Հիճրէթի (Փրկչ. 642):»

Հիճրէթի 22 թուին , երբ Մուավիա Սիրիոյ կուսակալ էր , Հայաստանի բնակիչները դեռ անհաւատ էին : Այն ժամանակները Մէսլէմէի որդի Հապիպ՝ Դարրանտի հրամատար էր և վրաստան կը գտնուէր . Թիֆլիզի և լերան բնակիչներուն գիր գրեց . յետոյ պատերազմեցաւ անոնց հետ մինչև որ նուաճեցան և թողութիւն խնդրեցին : Թղթակցութեան փոխանակութենէ մ'ետև , Հապիպ հետևեալ գիրն ուղղեց անոնց .

«Յանուն Աստուծոյ գթածին և ողորմածի . առ բնակիչս Թիֆլիզի որ 'ի Վրաստան , յերկրին Հօրմիւղի , ողջոն : Զեր պատճառաւոր գոհութիւն կուտամ Աստուծոյ , որմէ զատ ուրիշ Աստուած չկայ , որ ձեր պատգամաւորն ինձ հասուց , և խմացայ

թէ ի՞նչ գէշ ճանբու մէջ կը դժնուիք : Ասկէց կը հասկնամ որ դուք աննշան ժողովուրդ մ'էք, ինչ պէս որ մեք ալ էինք ժամանակաւ մինչև որ Առտ ւած իւր Մուհամմէտ մարդարէին ձեռօք մեղ կը լութեց, իսլամութեամբ ազնուացուց, և մեղ մեր աննըշան, անարդ ու տղէտ վիճակէն դուրս հանեց, Պատմեցին ինձ նաև թէ դուք մեր ունեցած ապահովութիւնը վայելելու կը փափաքիք և մեղ չէք ուզեր մերժել : Մեր հաւատաքն ընդունողներուն ձիրի որդի Ապտիւլլահմանը կը զրկեմ որ ծանօթէ ձեզ իրմէ հմաւած Աստուածային դիտութեան և Ղուրանի ծանօթութեան: Նոյն անձը պիտի բերէ ձեզ իմ նամակս որ ձեզ ապահովութիւն կը նորհէ: Եթէ հաւանութիւն առք, այն նամակս ձեզ պիտի տայ . իսկ եթէ չտաք, պատերազմի պիտի գամ ձեր վրայ . որովհետեւ Աստուած դաւաճանները չսիրեր : »

«Յանուն Սոտուծոյ դթածին և ողորմածի: Այս է գերն զոր Հապիազ որդի Մէսլէմէի գրեց առ բը նակիչս Թիֆլիզի որ ՚ի Վրաստան, յերկրին Հօրմիւֆի: Ապահովութիւն ձեր անձանց, ընչից, վանօրէից, տաճարաց, և աղօթարանաց, այս պայմանաւ որ իւրաքանչիւր ընտանեաց հայր մէկ գենար գլխահարկ վճարէ : Մեր պարտքն է ձեզ պաշտպանել Աստուծոյ և մեր թշնամեաց դէմ, գիշերը ձեզ հիւրընկալել և այն ուտելիքները տալ, որք ներեւալ են ոտըր գիրքն ընդունողներուն . չարիքը հեռացնել, և այնպիսի ճանքաներու մէջ տանիլ ձեզ, ուր ոչ ոք վնաս կրէ : Եւ եթէ իսլամութիւնն ընդունիք և մեղ հետ աղօթք

Ա ողորմնւթիւն ընէք, մեզ եղբայր կը լաք թէ
մեր հաւատոյն, թէ՛ մեր ընչից և թէ այն ամեն
բարեաց մասին՝ զորս Աստուած և իր Մարդարէն խռո-
տացաւ մեզ իր գրքին մէջ: Եթէ չընդունիք զայս,
պատերազմ պիտի ընենք ձեզ դէմ, վասն զի
Աստուած չսիրեր դաւաճանները:

Վկայք: Ապահովահման որդի Խալիթի և Հաւ-
ճաճ որդի Սիաթի: Գրեաց Ծիահ: Զաստուած և
իր հրեշտակները, ընդ նոսին ամեն հաւատաց-
եալները վկայ կը կոչեմ. և Աստուծոյ վկայութիւ-
նը բաւական է⁴¹:

Հիճրէթի 25րդ (Փրկչ. 646) թուին, ըստ պատ-
մութեան Ապու Մահնափի, վէլիտ որդի Օքպայի՝
Առրպատականի և Հայաստանի վրայ քալեց, ու-
րովհետեւ բնակիչներն էօմէր ամիրապետին օրով
հաստատեալ գաշնադրութեան հակառակ վար-
ւած էին: Ուրիշ անձինք ալ ընդհակառակն՝ կը
պատմեն թէ այն արշաւանքը Հիճրէթի 26րդ
տարին եղաւ (1):

* Թապէրիի այս պատմութիւնն ամեն մասամբ հա-
մաձայն չէ Պէլլածօրիի պատմութեան: գլխաւորապէս
ընթերցողը քանի մը տարբերութիւններ պիտի դտնէ
այն գրութեանց մէջ զորս Հապիկ Թիֆլիզի բնակչաց ուղ-
ղած է: Բայց որովհետեւ հիմնական գաղափարներն եր-
կու տարբեր խմբագրութեանց մէջ ալ կը դտնուին, կը
հետեւ որ երկու հեղինակներն իրարմէ օրինակած չեն,
ուստի և երկուքին ալ պատմութիւնն արժանահաւատ է.

(1) Այդարեւ Դևոնդ կը պատմէ թէ Հիճրէթի 22
(Փրկչ. 643) թուին Արտբներն առաջին անդամ Հայաս-
տան արշաւելէ ետեւ՝ Հիճրէթի 26 թուին երկրորդ և ա-
ւելի ահեղ արշաւանք մը ըրին:

Հիշամ՝ որդի Մուհամմէտի կըպատմէ թէ Քու-
ֆայի նահանգէն ժողովված զօրքերը թէյ և Ա-
տըրպատական գաւառոց մէջ կըծառայէին, և այս
երկու մարզերուն մէջ 40000 Քուֆայիք կը գըտ-
նուէին, այն է 6000 Ատըրպատականի, և 4000 թէ-
յի մէջ։ Քուֆայի զօրաբաժնին թիւն էր 40000,
որոց 10000ն այս երկու սահմանակից երկիրներուն
պահպանութիւն կընէր, այնպէս որ իւրաքանչիւր
դինուորի կարգը չորս տարին անդամ մը կուգար-

երբոր Օքպայի որդի Վէլիտ՝ Օսման ամիրապետին օրով Քուֆայի հրամատար էր, Հայաստան ու
Ատըրպատական արշաւեց։ Իր քով հրաւիրեց թէպիա-
յի որդի Սէլման, և իր յառաջապահ գունդին հը-
րամատարութիւնն անոր յանձնեց։ Վէլիտ մինչև
Հայաստան քալելու դիտաւորութիւն ունենալով,
երբոր Ատըրպատական մտաւ, Շէպէլ Ահմազիի
որդի Ապտուլլահը 4000 մարդով յառաջ քալեցուց,
որ Մօդանի և Շիրվանի երկիրներն ասպատակեց
և բազում աւար և դերի բերաւ։ Այն ժամա-
նակ Վէլիտ 800000 դրամ հարկ դրաւ Ատըրպա-
տականի վրայ՝ Եէմանի որդի Հուզէյֆայի դաշ-
նագրութեան համեմատ, զոր Նէհավէնախի ճա-
կատամարտէն ետև կնքած էր Հիճրէթի 22 թը-
ւին։ Էօմէր ամիրապետին մահուանէն ետև բը-
նակիչները դերի բռնեցին Հուզէյֆա։ յետոյ Օս-
ման ամիրապետն Օքպայի որդի Վէլիտն Ատըրպա-
տականի և Հայաստանի կառավարիչ կարգեց։ Եր-
բոր Վէլիտ իր բանակովս Ատըրպատական մտաւ,
բնակիչներն հնապանդեցան և ինդըրեցին որ հին
դաշնագրութիւնը վերահաստատէ։ Վէլիտ հաճե-

ցաւ և հարկին գումարն ընդունեց . յետոյ զարկու ցրուեց իսլամութեան թշնամիները, որք շըշջակաները կը բնակէին: Երբոր Շէպէլի որդի Ապտաւլահ իր աւարառութեան արշաւանքէն եւ դարձաւ, Վէլիս՝ Ռէպիայի որդի Սէլմանը Հայաստան զրկեց 12000 զօրօք, Հիճրէթի 24 թուին : Սէլման Հայաստան մտնելով, ջարդեց կաղոպտեց և գերի վարեց, յետոյ լի աւարաւ եւ դարձաւ (2): Թապէրի՝ Հիճրէթի 17 կամ ըստ այլոց 19 (Փրկչ. 638 կամ 640) թուին, Եղեսիա, Հարրան, Մծբին, Բայիւլայն և Տարա քաղաքաց առումը կը պատմէ . յետոյ կաւելցնէ .

Երբոր Ապու Մուսա 19 թուին Մծբին քաղաքը նուաճեց, Ապուլ Ասսիի որդի Օսմանը չորրորդ Հայոց երկիրը զրկեց : Ժամանակը ձմեռ էր : Հոն պատերազմի մը մէջ Մուաթալի որդի Սաֆվան սպաննուեցաւ : Յետոյ Օսման Հաշտութիւն կնքեց երկրին բնակչաց հետ, մարդ դլուխ տարեկան մէկ ոսկի տուրք դնելով անոնց վրայ :

Ինչպէս որ արդէն ծանուցած ենք, Թապէրիի Տէեղերական պատմութիւնը դեռ տպուած չէ, և դանուած ձեռագիրներն ալ թերի են : Մեր ձեռ-

(2) Թապէրիի այս պատմութիւնը կամբողջացնէ Պետնդի պատմագրութիւնը, որ միւենոյն բաները պատմած ժամանակ՝ ոչ արար զօրապետին անունը կը յիշէ և ոչ այս արշաւանաց ուրիշ պարագաները: Պետնդ ալ Թապէիրի պատմութիւնը կամբողջացնէ: Հայոց Թէոդոր զօրապետին անունն և Հայաստանի վերաբերեալ ուրիշ պարագաներ պատմելով :

քըն եղած ձես.ագիրն ալ, յորմէ նախընթաց քաղ-
ւածներն հանեցինք, և տարուան պակաս մ'ունի,
զոր թերեւս ուրիշ մատենադարանէ մը կարենանք
գտնել: Առ այժմ այն և տարուան պակասն իպն
խալտունի և իպն իւլ Աթիրի գործերէն պիտի
լցնենք, որք մեծ յարգ և հեղինակութիւն ունե-
ցող պատմագիրներ են, և թափէրիի! պատմա-
գըրութենէն յաճախ փոխառութիւններ ըրած են,
Այս երկու պատմագըրութիւններն՝ որոցմէ մեր
քաղուածները պիտի ընենք, Եդիպտական կառա-
վարութեան ձեռօք տպուած են. իպն խալտուն
(Արաբաց Մօնթէսքիէօն) ութ հատորի վրայ. իսկ
իպն իւլ Աթիր՝ տասներկու հատորի վրայ, Հոլան-
տայի Լէյա քաղաքին մէջ տպագըրեալ օրինակին
համեմատ, որ նոյնպէս տասներկու հատորի բաժ-
նուած է:

ԻՊՆ ԽԱԼՏՈՒՆ ՀԱՏՈՐ 8ՐԴ, ԵՐԵՍ 408

իպն իսհագ կը պատմէ թէ Միջագետաց եր-
կիլն Հինըէթի 19 (Փրկչ. 640) թուին նուաճեցաւ.
և թէ Լիաքասի որդի Սաատ՝ զօրաբանակ մը զըր-
կեց հոն Ղանէմի որդի իյատի հրամատարութեամք,
որոյ հետ գտնուեցաւ նաև Սաատի որդի Էօմէր:
իյատ և Էօմէր՝ Եդեսիա (Թօհա) քաղաքն առին,
Հարրան քաղաքին հետ ալ դաշնադրութիւն մը-
րին: Ապու Մուսա՝ Մծրին քաղաքը նուաճեց և
Ապուի որդի Օսմանը Հայաստան դրկեց, որ հար-
կատուութեան ենթարկեցաւ:

Ապու Օպէյտէ՝ Ղանէմի որդի իյատը Միջա-
գետք զրկեց, կամ՝ ըստ այլոց՝ Ապա Օպէյտէի

Ժահուընէն ետև Էօմէր ամիրապետը զայն Հիմսի,
Քիննէորինի և Միջագետաց ոստիկան կարգեց ,
որ Հիճրէթի 18 թուին հոն գնաց 5900 զօրքով:

Այս զօրագունդին մէկ բաժինը Բագգա քա-
ղաքը պաշարելով հարկատուութեան ենթարկեց:
Մօաթալի որդի Սաֆվան և Մէլլէմէր որդի Հա-
պիպ՝ Հարրան քաղաքին վրայ յարձակում ըրին,
և Սաֆվան՝ Եղեսիա քաղաքին վրայ քալելով
պաշարեց՝ մինչև որ բնակիչներն հաշտութիւն
խնդրեցին . յետոյ Հարրան դարձաւ , որ նոյնպէս
նուածեցաւ : Յետոյ Շամշատ : Մէրուճ և Բասդէյ-
ֆա քաղաքներն առաւ , որք Մէնպէճի պայման-
ներն ընդունեցին : Յետոյ Ամիդ , Միաֆարէդին ,
Դէֆր—Թութա , Մծբին , Մէրտին և Մուսուլ քա-
ղաքներն առաւ . և յետոյ Կարնոյ վրայ քալելով
Պիթլիզի կիրճը մտաւ : Այս , ինչպէս նաև Խիլաթ-
քաղաքն , անձնատուր ըլլալով , Արարները Հայաս-
տան մտան : Յետոյ Սաֆվան՝ Բագգա և անտի
Հիմս դարձաւ ու հոն մեռաւ :

ԻՊՆ ԽԱԼՏՈՒՆ ՀԱՃ. 8ՐԴ ԵՐԵՄ 149

ԱՇԽԱՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ ԱՏՐՊԱՏԱԿԱՆԱՑ

Երբոր Նօայիմ Բէյ քաղաքն առաւ , Էօմէր
ամիրապետն հրաման ըրաւ անոր որ Խարաշա Ան-
սարիի որդի Սէմագն Ատրպատական ղրկէ յօդ-
նութիւն Պուքէյիրի որդւոյ Սպատուլահայ : Քան-
զի երբոր Պուքէյիր դէպ Ատրպատական քալեց ,
Ճէպէլի մէջ Ֆարախզատի որդի Խաֆէնտիարի պա-
տահեցաւ , որ Համատանի մօտ Մահիրուտ ըս-
տած տեղը Նօայիմի գէմ տուած ճակատամար-

տէն ետև փախեր էր : իսֆէնտիար թիւսթէմի եղբայրն էր : Պուքէյիր յազմեց անոր և զինքն ալ գերի բռնեց :

Այն ժամանակ իսֆէնտիար ըստ Պուքէյիրի . «Թող զիս որ քեզ հետ միանամ և բոլոր երկիրը քեզ հնազանդեցնեմ . Եթէ այնպէս չընես , ժողովուրդը լեռները կը փախչի և հոն հնար եղածին չափ կամրանայ : » Պուքէյիր ընդունեց այս առաջարկութիւնը , և երկիրն առանց պատերազմի նըւաճեցաւ , 'ի բաց առեալ ամրոցները : Այն միջոցին Սէմագ ալ նոյնչափ զօրքով դնաց Պուքէյիրի հետ միացաւ , և նոր աշխարհակալութիւններ ըշըին , ինչպէս նաև Ֆէրդատի որդի Օթպատ : Պուքէյիր՝ յառաջ քալելու հրաման խնդրեց Լօմէր ամիրապետէն . նա ալ հրամայեց որ մինչև ել Պապ (Դարբանդ) յառաջ խաղայ՝ յաջորդ մը կարգելով իր մինչև այն ժամանակ նուաճած երկիրներուն մէջ : Պուքէյիր ալ Ֆէրդատի որդի Օթպան իրեն յաջորդ անուանեց : Ամիրապետն ամբողջ Ատրպատականի կառավարութիւնն ալ Օթպայի յանձնելով , Օթպա՝ Պուքէյիրի նուաճած երկիրներուն սոտիկան անուանեց Խարաշայի որդի Սէմագ :

Պէհրամ որդի Ֆէրախազատայ՝ Օթպայի ճանքան կտրել ուզեց իր զօրքերով , և անոր դէմ ելաւ , բայց Օթպա զարկաւ ցրուեց անոր զօրքերը : Իսֆէնտիար , որ Պուքէյիրի քով գերի էր , երբոր այս լուրն առաւ , հաշտութեան միջնորդ եղաւ , և Ատրպատականայ բոլոր բնակիչք հպատակեցան արտաք : Պուքէյիր և Օթպատ տեղեկադրեցին

առ Էօմէր ամիրապետն, աւարին հինգերորդ մաս
սըն անոր զրկելով։ Ամիրապետն Ատրապատականի
երկրին հետ կնքուած հաշառութեան դաշնադ-
րութիւնն ստորագրեց։

Յետոյ Օթպա՝ Շեհրիզօր և Սամկանի քազա-
քաց վրայ գեաց, և ճակատամարտէ մ'ետև զա-
նոնք առաւ և գլխահարկի և այլ տրոց ենթար-
կեց։ Քուրդերուն մէկ մասը ջարդուեցան։

ԱՌՈՒՄՆ ԴԱՐԲԱՆԴԱՑ ԵՐԵՄ 430

Երբոր Էօմէր հրաման ըրեր էր Պուքէյիրի որ
էլ Պապի դէմ արշուտէ։ Պուքէյիր՝ Ամրի որդի
Սիւրագան զրկեց այն պատերազմն ընելու։ Սիւրա-
գա Պասրայէն ելաւ, Ռէպիայի որդի Ապտիւլրահ-
մանն յառաջապահ գունդին և Խան Խոսէյիս էլ
Ղաֆարին և Ապտուլահի որդի Պուքէյիրն իր
բանակին երկու թեւերուն հրամատար կարգեց։
Ետ դառնալու ճանրուն վրայ գտնուած կիրճե-
րուն պաշտպանութիւնն ալ Ռէպիայի որդի Սէր-
մանի յանձնեց։ Վառ Մուսա Էղջարի Սիւրագա-
յի աեղ Պասրայի ոստիկան եղաւ։ Սիւրագայի զօ-
բութեան վրայ աւելցաւ Միջագետաց ոստիկան
Մէպէմէի որդի Հապիալ, որոյ տեղ Միջագետաց
ոստիկան անուանեցաւ Հօղալուի որդի Զիատ։ Սիւ-
րագա՝ Ատրպատականէն ճանրայ ելաւ, և երբոր
Ապտիւլրահման յառաջապահ գունդերով էլ Պապ
հասաւ, երկրին Շահրիար թագաւորը, որ Խորա-
յելացւոց յաղթող և Պաղեստինէն Էլպատլ փոխադ-
րող Շահրիար թագաւորին տոհմէն էր, բանակ-
ցութեան մոտաւ Ապտիւլրահմանի հետ, և անոր

քով երթալով խնդրեց որ փոխանակ գլխահարկ վճարելու՝ հնաղանդ և օդնական ըլլայ խոլամաց . «Մեզ մի՛ ստիպէք գլխահարկ վճարելու ; ըստ , որովհետեւ մեզ կը տկարացնէք ձեր թշնամեաց դէմ» : Ապտիւլրահման Սիւրագոյի քով պրկեց զայն : Սիւրագա ալ պատուիսանեց . «Անսիք որ պատերազմի չերթան և տուներնին մնան , պէտք է որ գլխահարկ վճարեն» : Այս պայմանագրութիւնն ընդունուեցաւ և Էօմէր ալ վաւերացուց :

ՆՈՒԱՋՈՒԽՄՆ ՄՕԴԱՆԱՑ ԵՒ ԼԵՐԱՆՑ ՀՅՅԱՍՏԱՆԻ

Սիւրագա , Դարրանդի գործերն աւարտելէ ետեւ քանի մը զօրագլուխ զրկեց Հայաստանի շընջակայ լեռները : Պուքէյիր Մօդան զրկուեցաւ , Հապիպ Թիֆլիզ Հուզէյֆա Ալանաց լեռները , Սէլման ալ ուրիշ կողմ : Այս ամեն արշաւանաց վրայ տեղեկադիր զրկեց Էօմէր ամիրապետին : Էօմէր՝ կատարեալ յաջողութիւն մը չէր համարձակերյուսալ , որովհետեւ սահմանակից երկիրը խիստ ընդարձակ էր : Շատ չանցած , Սիւրագոյի մահուան ըրւըն առնելով թէպիայի որդի Ապտիւլրահմանն անոր յաջորդ անուանեց , հրաման ըրաւ որ Դարբանդի կրծին մէջ նստի , և Թուրքաց հետ սլատերազմի : Արդարև զօրագլուխներէն ոչ մին չըկրցաւ երկրակալութիւն մընել բաց ՚ի Պուքէյիրէն՝ որ Մօդանը նուաճեց և բնակչաց վրայ մարդ գլուխ մէկ սակի գլխահարկ դրաւ :

ՊԱՏԵՐԱԶՄ ԸՆԴԴԵՄ ԹՈՒՐԲԱՑ

Երբոր Ապտիւլրահման Թուրքաց հետ սլատերազմելու հրաման ստացաւ ամիրապետէն , իլ Պապ

քալեց Շահրիարի հետ և պատերազմեցաւ Պուլզարաց դէմ. այս ժողովուրդը Թուրք աղջին մասն էր : Պուլզարք փախան և ամռալ տեղեր ապաստանեցան : Ապահովահմանի և Շահրիարի ձիւաւորները մինչև 200 փարսախ յառաջ քալեցին Պուլզարաց երկրին մէջ, և բազում աւարաւ ետ դարձան : Պուլզարաց դէմ պատերազմը շարունակեց մինչև Օսմանի ամիրապետութեան օրով, և Թուրքերը միշտ նոր ՚ի նորոյ գրդուեցին զանոնք : Պահ մ'այնպէս երեակայեցին թէ իսլամներն հըսրեցտակներէն սկաշտամութիւն դանելով անընկճելի էին . բայց օրին մէկըյանկարծ խոլամի մը պատահելով՝ սպաննեցին, և այն օրէն սիրտ առնելով յանդէնութիւննին աւելցաւ : Ապահովահման միշտ կուռեցաւ անոնց հետ, մինչև որ զարնուեցաւ մեռաւ և իր զօրքն յաղթուեցաւ : Եղբայրը՝ Սէլման՝ դրօշակն առաւ, իր զօրաց հետ ետ քաշեցաւ և ձիլանէն անցնելով ձօրճան գնաց :

ՆՈՒԱՃՈՒՄՆ ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Հիճրէթի 25 թուին Ատրպատականի բնակիչներն ապստամբելով, Օսման ամիրապետն Ատքրպատականի 0թպա ոստիկանը պաշտօնէն ձդեց : Ձէլիս Ատրպատականի վրայ քալեց : Իր յառաջապահ գունդին կը հրամայէր Ապահովահման նահանգներն ասպատակեց և բազում դերի բերաւ : Ատրպատականի բնակիչներն հաշտութիւնն ինդրեցին, նա ալ շնորհեց՝ Հուզէյֆայի պայմաններով, այնէ 800000 դրամ հարկով դոր գանձեց :

Յետոյ իր գունդերը ցրուելով թէպիայի որդի Սէլմանը 12000 մարդով Հայաստան զրկեց, ուր մեծ նախճիր գործեց . յետոյ վէլիտի քով գարձաւ . նա ալ բուժա գարձաւ Մուսուլմէն անցնելով : Հոն ամիրապետէն նամակ մ'ստացաւ որ կը ծանուցանէր թէ Յոյնք Մօավիայի վրայ կը քալէին Սիրիոյ մէջ, և կը հրամայէր որ անյապաղ 12000 հետեակազօր զրկէ Նէճտէն և թէսէն : Վէլիտ 8000 զօրք զրկեց Սէլմանի հրամատարութեամբ : Ասոնք Յունաց երկիրը մտան Մէլլէմէի որդի Հապիալի հետ, ասպատակեցին և ամուր քաղաքաց վրայ յարձակեցան : Հապիալի և Սէլմանի զօրաց վրայ աւելցան և Ատասիի որդի Սայիտ իր զօրքերով :

Այն ժամանակ Յաման Էրաման գրեց Մօավիայի՝ որ Հապիալ Սիրիոյ զօրքերով Հայաստանի վրայ պատերազմի երթայ : Հապիալ Հայաստան արշաւելով Գալիդալա (Կարին) քաղաքը պաշարեց, որոյ բնակլիչները վերջապէս անձնատուը եղան այս պայմանաւ որ ուզողներն ուրիշ երկիր գաղթեն, և մնացեալներն ալ գլխահարկ վճարեն : Հետեաբար բնակչաց մեծ մամն յունաց երկիրը գաղթեցին : Հապիալ՝ քանի մ'ամիս Գալիդալա մնալէ ետեւ՝ իմացաւ որ Արմէնիաքոս նախարարը, այսինքն Մալաթիոյ, Սեբաստիոյ և Խոսնիոյ գաւառաց հրամատարը՝ որ մինչև Բոսֆոր կլշխէր, 80000 զօրքով իր վրայ կուգար : Հապիալ օգնութիւն խնդրեց Մօավիայէն, և ամիրապետին ալ գիր գըրեց : Նա ալ հրաման զրկեց Ատասիի որդի Սայիտ որ Հապիալի օդնութիւն զրկէ : Սայիտ ալ Սէլմա-

նը զրկեց 6000 մարդով։ Հապիպ յանկարծակի Յունաց բանակին վրայ յարձակելով՝ ցիրուցան ըրաւ, և ինքը Գալիդալա դարձաւ իր արշաւանքը շարունակելու։ Այն ժամանակ Խիլաթի նախարարն Հապիպի քով երթալով՝ Ղանէմի որդի Իյատի հետ կնքած դաշնագիրը ցոյց տուաւ, և ունեցած ստակն անոր մատոյց։ Հապիպ Խիլաթ մըտաւ, հաշտութեան դաշնադրութիւն կնքեց Սիրճանի և Արտիշանի իշխանաց հետ։ Յետոյ Դուին քաղաքը պաշարելով՝ նախ տեղւոյն բնակչաց՝ և ապա բոլոր Սիրճանի երկրին հետ հաշտութիւն կնքեց։ Շատ չանցած Շիմշատի զօրքերն իր վրայ յարձակեցան, բայց Հապիպ յաղթեց, և անոնց ամրոցներն առաւ։ Այն ժամանակ հաշտութիւն կնքեց Խարզանի նախարարին հետ, և Թիֆլիզի վրայ քալելով, թէ՛ զայն և թէ շրջակայ ամրոցներէն ու քաղաքներէն շատերը նուաճեց։

Սէլման որդի Բէպիս Պահէլիի՝ Արրանի երկիրն արշաւեց և Պէյլագանի, Պէրտաայի և շըրջակայ գիւղօրէից բնակիչներն հարկատու ըրաւ։ յետոյ Պուշէնճանի Քրդաց վրայ երթալով յաղթեց և անոնց մէկ մասն հարկատուութեան ենթարկեց։ Յետոյ Շէմգուր քաղաքը նուաճեց, որ ժամանակէ մէետև Միւթէվէք.ք.քիլիէ կոչուեցաւ։ Սէլման ընթացքը շարունակելով Թիֆլիէ^(*) քաղաքն ալ առաւ։ Գէսգէրի իշխանն հարկատուութիւն յանձն առաւ, ինչպէս նաև Շիրվանի թագաւորն և ուրիշ լեռնաբնակ թագաւորք մինչև էլ Պապ։

ԻՊՆ ԽԱԼՏՈՒՆ ԵՐ. 135

Հիճրէթի 30 (Փրկչ. 650—651) թուին Հուղէյ-
ֆա՝ թէյէն էլ Պապ գնաց յօդնութիւն Ապտիւլ-
բահմանի որդւոյ թէպիայի, և իր տեղ Ատրպա-
տականի ստոիկան անուանեցաւ Աասիի, որդի Սա-
յիտ, մինչեւ որ Ապտիւլբահմանի մեռնելէն ետև
Հուղէյֆա վերադարձաւ, ինչպէս որ արդէն պատ-
մուած է :

ԻՊՆ ԽԱԼՏՈՒՆ ԵՐ. 137

Թուրքերն ու Խաղարներն Խոլամաց քաջու-
թիւնն ու զօրութիւնը տեսնելով կը կարծէին թէ
անընկծելի են, մինչեւ որ անտառի մը մէջ դա-
րան լարելով մէկ քանին սպաննեցին : Այնուհե-
տեւ անոնց դէմ դնելու համարձակեցան : Ապտ-
իւլբահման, որ այն ժամանակ Հայաստանի սահ-
մաններուն ստոիկանն էր մինչեւ էլ Պապ, Ամրի որ-
դի Սիւրագան էլ Պապի բերդին հրամանատար
կարգեց, և Էօմէր ամիրապետն ալ հաստատեց
այս ընտրութիւնը : Յետոյ շատ արշաւանքներ ը-
րաւ Խաղարաց և Պուլղարաց երկիրներուն մէջ :
Օսման ամիրապետն արդիլեց այս արշաւանքները,
բայց և այնպէս մինչեւ Հիճրէթի 32 թուականը
շարունակեցին : Թուրքերը շարունակ օդնութիւնն
ու քաջալերութիւն տուին Խաղարաց և Պուլղա-
րաց, և պատերազմն աւելի սաստկացաւ, մինչեւ
որ Ապտիւլբահման սպաննուեցաւ :

Երկու բանակ զրկաւեցան այս ժողովրդոց

դէմ։ Մին դէպ կը Պապ գնաց յօդնութիւն Սէլմանի որդւոյ Բէպիայի, միւսը դէպի Ճիւան և Ճօրծան քալեց Պարսիկ Սէլմանի և Ապու Հուրէյրի հետ։ Սայիտ որդի Ասսիի, որ Քուֆայի ոստիկան էր, Բէպիայի որդի Սէլմանն կը Պապի հըրամանատար անուանեց Ապտիւլրահման եղբօրը տեղ, և Քուֆային զօրագունդեր զրկեց անոր՝ Եամանի որդի Հուզէյֆայի հրամատարութեամբ։ Յսման ամիրապետը նաև Մէսլէմէի որդի Հապիապն աւելցուց Սիրիոյ զօրքով։ Սէլման այս ամեն զօրաց սպարապետ էր, բայց Հապիապ ուզեց որ ինքը ըլլայ սպարապետ։ ասկից վէճ ծագեցաւ երկուքին մէջ։ Հուզէյֆա երեք արշաւանք ըրաւ, որոց վերջինն Յսման ամիրապետին սպանման ժամանակները կատարուած է։

ԻՊՆ ԻԻԼ ԱԹԻՐ ՀԱՏ. Գ.

Հիճրէթի 42 թուին (Փրկչ. 663—664) թուին մեռաւ Հապիապ որդի Մէսլէմէի, որ Մօալիա ամիրապետին կողմէ Հայաստանի ոստիկան էր։

ԻՊՆ ԻԻԼ ԱԹԻՐ ՀԱՏ. Դ. ԵՐ. 450

Հիճրէթի 75 (Փրկչ. 692—693) թուին Ապտիւլ—Մէլիք ամիրապետն իր Մուհամմէտ եղբայրը Միջագետաց և Հայաստանի ոստիկան անւանեց։ Մուհամմէտ քանի մարշաւանք ըրաւ թշնամեաց դէմ։ Մինչև այն ժամանակ՝ վանայ լինը հասարակային ազատ սեփականութիւն մէկը։ ուր ուզողը կրնար ձկնորսութիւն ընել։ Մուհամմէտ արդիլեց այդ ձկնորսութիւնը, և իր կողմէ

յատուկ մարդիկ դրաւ որ ձկնորսութիւնը ընեն և
իր հաշուին վաճառեն : Նորա մահուանէն ետեւ
որդին՝ Մէրվան՝ վանայ լիճն իրեն սեփականու-
թիւնը ըրաւ, բայց Խալիֆայութիւնն Ռւմմիէաններէն
Ապաստեաններուն անցած ժամանակ կարսնցուց :
Այս լիճը միշտ մի և նոյն վիճակի մէջ կը մնայ ա-
ռանց աւելնալու կամ պակոելու, ինչպէս նտեւ մէ-
ջի ձկները, որ Թիրիխ կը կոչուին և հրաշալիք մ’
են, վասն զի ամեն տարի որոշեալ եղանակի մը
մէջ մանր ձկները լիճն հետ հազորդակցութիւն ու-
նեցող գետի մը մէջ կը մտնեն, և այն ժամանակ
ձեռքով կամ ուռկանով առատարար կը բռնուին,
և երբոր եղանակն անցնի : ալ չեն բռներ * :

ԻՊՆ ԻԻԼ ԱԹԻՐ ՀԱՅ. Դ. ԵԲ. 189.

ԻՊՆ ԽԱԼՏՈՒՆ ՀԱՅ. Դ. ԵԲ. 70.

Հիճրէթի 81 (Փրկչ. 700) թուին Ապտիւլ Մէ-
լիք ամիրապետն իր Ռւպէտուլլահ որդին զօրա-
բանակով մը Հայաստան զրկեց, որ Գալիքալա
(հարին) քաղաքը նուաճեց :

ԻՊՆ ԻԻԼ ԱԹԻՐ ՀԱՅ. Դ. ԵԲ. 197

ԻՊՆ ԽԱԼՏՈՒՆ ՀԱՅ. Դ. ԵԲ. 70.

Հիճրէթի 81 (Փրկչ. 701) թուին Մէրվանի որ-

* Շէմսէտափին Մուհամմէտ էլ Թուսսի՝ Պարսկերէն
աշխարհագրութեան մը հեղինակն՝ այսպէս կըսէ Վանայ
լիճն համար .

« Տարւոյն տասն ամիսը ոչ ձուկ կը տեսնուի մէջը
և ոչ խեչափառ . յետոյ երկան կերնեն : Այս երկոյթին
պատճառն Աստուծոյ միայն ծանօթ է : »

գի Մուհամմէտ Հայաստան արշաւեց : Հայերն յաղթուելով հաշառութիւն խնդրեցին , Մուհամմէտ ալ չնորհեց և Ապառուլլահի որդի Ապու Շէյխըն երկրին ոստիկան անուանեց . բայց Հայերը դաւաճանութեամբ սպաննեցին զայն 82 ին կամ 83 ին :

ԻՊՆ ԻԻԼ ԱԹԻԲ ՀԱՏ Դ. ԵՐ. 206.

Հիճրէթի 84 թուին Մէրվանի որդի Մուհամմէտ նորէն Հայաստան արշաւեց :

ԻՊՆ ԻԻԼ ԱԹԻԲ ՀԱՏ Դ. ԵՐ. 242

ԻՊՆ ԽԱՂՃՈՒՆ ՀԱՏ Դ. ԵՐ. 71

Հիճրէթի 85 (Փրկչ. 704) թուին Մուհամմէտ որդի Մէրվանի Հայաստանի վրայ պատերազմի գնաց , որ ամառն ու ձմեռը տեւեց :

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ

Ահա այսչափ տեղեկութիւն կուտան այս երկու պատմագիրք Փրկչ. 704 թուին Արաբաց Հայաստան արշաւելուն վրայ , որ Նախիջևանի կոտորածովը նշանաւոր եղած է , ինչպէս որ կը պատմեն Ղեռնդ և Յօհաննէս կաթողիկոս : Յունաց պատմագիրներն ալ կը յիշեն այս պատերազմիք :

Թէօֆան յոյն պատմագիրն հետեւեալ կերպիւ կը պատմէ (Եր. 570. ապագը . Պօննի).

« Աշխարհի 6195 և Փրկչ. 704 թուին Հայոց նախարարներն ապատամբեցան Սարակինոսաց դէմ , և Հայաստան գանուած Սարակինոսները ջարդեւ :

ցիս : Յետոյ գիր դրեցին Յունաց Աբսիմալոս կայ-
սեր և Յոյներն իրենց երկիրը տարին . բայց Մու-
համմէտ անոնց վրայ քալեց և շատերն սպաննե-
լով Հայաստանը նորէն նուաճեց . յետոյ Հայոց նա-
խարարները տեղ մը դռւմարելով (Նախիջևանի ե-
կեղեցին) , ողջ ողջ այրեց :

ԻՊԵ ԻԻԼ ԱԹԻՐ ՀԱՏ · Դ. ԵՐ. 218

Հիճրէթի 88 (Փրկչ. 707) թուին Մէսլէմէ՝ որդի
վախճանեալ Ապտիւլմէլիք ամիրապետին , և Ապ-
պաս՝ որդի վէլիտ ամիրապետի՝ արշաւանք մը լ-
րին Յունաց կայսրութեան դէմ :

Ամիրապետն հրաման զրկեց Հայաստանի ու-
տիկանին որ նամակ մը դրելով ծանուցանէ . յու-
նաց կայսեր թէ Խաղարներն և Հայաստանի լե-
րանց ուրիշ թագաւորները միանալով Յունաց երկ-
րին վրայ պիտի յարձակէին , որն որ կատարուե-
ցաւ : Յետոյ վէլիտ հրաման ըրաւ Սիրիոյ զօրաց
որ Հայաստան քալեն : Անոնք ալ բազում պաշտ-
ըով Միջագետք քալեցին , և անտի Յունաց երկիր-
ները մտան :

ԻՊԵ ԻԻԼ ԱԹԻՐ ՀԱՏ · Դ. ԵՐ. 227

ԻՊԵ ԽՍԼՃՈՒՆ ՀԱՏ · Գ. ԵՐ. 71

Հիճրէթի 91 (Փրկչ. 710) թուին՝ վէլիտ ամի-
րապետն իր մօրեղբայր Մուհամմէտը Միջագետաց
և Հայաստանի ոստիկանութենէն հանեց և իր
Մէսլէմէ եղբայրն այն երկիրներուն ոստիկան ան-
ուանեց : Մեսլէմէ՝ Ատրապատականի սահմանագլ-
խին վրայ բնակող Յուրքաց գէմ քալեց և մինչեւ

Դարբանդ հասաւ՝ բազմաթիւ քաղաքներ ու բերքեր նուաճելով :

ԻՊՆ ԻՒԼ ԱԹԻՐ ՀԱՏ Դ. ԵՐ. 223

ԻՊՆ ԽԱԼՏՈՒԽ ՀԱՏ Դ. ԵՐ. 71.

Հիճրէթի 92 (Փրկչ. 711) թուին, Մէսլէմէ Յուշ Կաց երկիրն արշաւելով երեք բերդ առաւ, և Սուսէնէ քաղաքին բնակիչներն Յունաց երկիրն առարեց :

ՄԱՆՈԹՈՒԹԻՒՆ

Վերոյիշեալ համառօտ տեղեկութիւնը կը բացառորի հետևեալ երկու հատուածներով.

Թէօֆանէս յոյն պատմագիր երես 585.

« 711 թուին Փիլիպպիդոս կայսրն Հայաստանէն տարագրեալ Հայերն ստիպեց որ Մալաթիա և Զորորդ Հայոց երկիրները բնակին :

«Մալալմաս (Մէսլէմէ) Ամասիա քաղաքն և ուրիշ մանր բերդեր առաւ և բաղում դերի տարաւ : »

Ղեռնդ, պատմութիւն պատերազմաց և աշխարհակալութեանց Արաբաց՚ի Հայս, Գլ. 6, Եր. 58.

«Իսկ Սմբատ կիւրապատն և նախարարք որ ընդ նմա, դնացեալ յմեկնեցան յաշխարհէս, և անցեալ խնդրեցին ՚ի թագաւորէն Յունաց քաղաք բնակութեան և դադարս խաշանց իւրեանց, և նա տայր նոցա զքաղաքն Փոյթ (Փօթի) ՚ի կողմանս զեղեգեր աշխարհին, և բնակեցան ՚ի նմա ամսվեց : »

ԻՊՆ ԻԻԼ ԱԹԻԲ ՀԱՏ Ե. ԵՐ. 28.

Հիճրէթի 101 (Փրկչ. 719—720) թուին մեռաւ
Միջագետաց Հայաստանի և Ատրպատականի ոս-
տեկան լրուհամմէտ որդի Մէրվանայ և Եղբայր
Ապտիւլմէլիք ամիրապետի : Բազում պատերազմ
ներ ըրաւ Յունաց և Հայոց դէմ : Քաջ մարդ մըլ-
լալով , իր Ապտիւլմէլիք Եղբօք նախանձը շարժեց
իր վրայ :

ԻՊՆ ԻԻԼ ԱԹԻԲ ՀԱՏ Ե. ԵՐ. 44—45.

ԻՊՆ ԽԱԼՏՈՒՆ ՀԱՏ Դ. ԵՐ. 83.

Հիճրէթի 105 (Փրկչ. 722—723) թուին իս-
լամաց բանակ մը Խաղարաց Երկիրը մոռաւ Հա-
յաստանի ճանրով՝ թապիսպ Մէհրանիի հրամա-
տարութեամբ : Խաղարք՝ Գըրճագաց ազգէն և
թուրքաց այլ և այլցեղերէն օգնութիւն դանելով՝
Խոլամաց դէմ ճակատամարտ մը տուին «Քարանց
Մարդ» ըստւած տեղը : Պատերազմն արիւնուուշտ
Եղաւ և բազմաթիւ Խոլամք սպաննուեցան : Խա-
ղարներն անսնց բանակատեղին գրաւելով բոլոր
դատածնին կապտեցին : Փախստեայ Խոլամներն Հա-
պիսի հետ Սիրիա դարձան Եէղիտ Բ. ամիրապե-
տին քով : Եէղիտ անոնց փախուատը կշտամըելով,
Հապիսպ պատասխանեց . «Ո՛վ հրամատարդ հա-
ւատացելոց . քու զօրքերդ վատութիւն չըրին .
թշնամոյն առջև չփախան . ընդհակառակն հեծ-
եալք հեծելոց և հետեւակք հետեւակաց հետ կըռ-
ուեցան : Ես իսկ նիզակովս կոռուեցայ մինչև որ
ծայրի սլաքը կոտրեցաւ . որովս հարուածեցի մին-

չե որ խորտակեցաւ : Բայց Աստուծոյ կամքն այս
է եղեր :

Խաղարք այս յաղթութենէն քաջալերուե-
լով մեծ բազմաւթեամբ Հայաստանի երկիրն ար-
շաւեցին : Այն ժամանակ ամիրապետն Հայաստա-
նի ոստիկան անուանեց Ճերահ որդի Ապտուլլահ
Ճերէմիի , և բաւական թուով զօրք զրկեց անոր՝
որպէս զի պատերազմի Խաղարաց և այլ թշնամ-
եաց հետ :

Ճերահ դէպի Խաղարաց երկիրը քալել սկսաւ-
և երբոր Խաղարք իմացան , Դարբանդ դարձան
ու հոն սպասեցին :

Ճերահ Պէրտաս հասնելով՝ քանի մ'օր հոն
հանգիստ տուաւ իր զօրաց : Յետոյ կուր գետն
անցնելով իմացաւ որ իր զօրաց հետ դտնուող
լեռնակամներէն ոմանք՝ Խաղարաց թագաւորին
հետ թղթակցելով իւր բոլոր շարժումները կիմա-
ցընէին :

Այն ժամանակ քարողի մը բերնով ծանոյց իր
զօրաց թէ քանի մ'օր հոն պիտի կենան , և պաշար
բերել տուաւ հոն : Այս ալ գրուեցաւ Խաղարաց
թագաւորին , իբր թէ Ճերահ կը վախնար Խաղա-
րաց դէմ երթալու : Բայց նոյն գիշերը Ճերահ հը-
րաման ըրաւ իր զօրաց որ ճամբայ ենեն , և մին-
չե Դարբանդ յառաջացաւ՝ առանց Խաղարները
տեսնելու : Երկըն մէջ մտաւ , և հրոսախումբեր
զրկեց որ ամեն դտածնին առպատակեն :

Հետեւեալ օրն ասպատակաց խումբերն ետ դար-
ձան բազում տւարաւ : Այն ժամանակ Խաղարներն
իրենց արքայորդւոյն հրամատարութեամբ իոլա-

մաց վրայ յարձակեցան թան դետին քով և արիւնուուշտ ճակատամարտ մ'եղաւ :

Ճէրահ քաջալերեց իր զօրքերը , և կատաղի կոռուէ մ'ետե . Խազարք յաղթուելով 'ի փախուստ դարձան : Խարամներն անոնց ետևէն իյնալով շատ մարդ ջարդեցին , շատ ալ դերի բռնեցին , և ինչ որ իրենցմէ առնուած էր՝ ամենն ալ ետ առնելէ ետե . ընթացքնին շարունակեցին մինչև որ Հիւսէ-յին անուն բերդի մ'առջեւ հասան : Բերդապահ զօրքն անձնատուր ըլլալու առաջարկութիւն ընելով , Ճէրահ զանոնք բերդէն դուրս հանել տուաւ ամեն ունեցածնին իրենց թողլով : Յետոյ Եէրկօտ կամ Պէրկովա քաղքին վրայ երթալով տասն օր պաշարեց : Բնակիչքն անձնատուրութիւն առաջարկեցին : Ճէրահ քաղքին տիրելով բնակիչներն ու րիշ տեղ փոխադրեց :

Յետոյ Պիլէնճէր քաղաքին վրայ գնաց , որ Պուշտարաց երկրին մէջ հոչակաւոր բերդ մ'էր , և պաշարեց զայն : Պուլզարք 300 սայլ դրեր էին բերդին շուրջը , ամենն ալ իրարու կապած , որպէս զի խօսմները չկրնան պարսպին մօտենալ : Այն սայլերը մեծ մսաս տուին խօսմաց : Վերջապէս 30 խօսմ իրենց կեանքը զոհելն աչուրնին առնլով և իրարու ալ այնպէս խօսք տալով , իրենց սուրերուն պատեմնները կոտրտեցին և մէկ մարդու պէս սայլերուն վրայ յարձակելով կատաղարար կռուիլ սկսան անհաւատից հետ : Արձակուածներն այնչափ շատ էին , որ արել ծածկեցին : Խարամներն անխնայ կռուելով սայլերուն քով հտասն , և զանոնք իրարու կապող պարանները կրա-

բելով սայլերը քաշեցին իսլամաց բանակը տարին
Այն ժամանակ կոխուը սաստկանոլով յետին կա-
տաղութեան հասաւ, և վերջապէս Պուլդարք յուղ-
թուելով՝ ի վախուսատ դարձան և իսլամն ըստ բեր-
գին տիրեցին թէպիւլ էվլէլ ամսոյ մէջ (օդաստառ
723): Աւարին բաշխման ժամանակ իւրաքանչիւը
ձիաւորի 300 սոկի ինկաւ: Զիաւորաց թիւը 30000էն
աւելի էր: Գերիներուն մէջ էին նաև Պուլզարաց
իշխանին կանայքն ու որդիքը: Ճէրահ Պուլզարաց
իշխանն իր առջեւը բերել տալով, ընտանիքը,
զաւակները, բոլոր դոյքն ու բերդն անոր դար-
ձուց, պայման դնելով, որ հսկողութիւն ընէ ան-
հաւատից վրայ և իսլամաց տեղեկութիւն տայ:

Այն ժամանակ Ճէրահ մեկնեցաւ Պուլզարաց
երկրէն և գնաց վէպէնտէրի բերդը պաշարեց,
որոյ մէջ 40000 տան չափ թուրք բնակիչք կային:
Ասոնք հաշտութիւն կնքեցին որոշեալ գումար մը
վճարելով: Յետոյ այս երկիրներուն բնակիչները
միարանելով իսլամաց ետ դառնալու ճանրան կըտ-
րեցին: Պուլզարաց իշխանն իմացուց այս բանը
Ճէրահին, նա ալ անմիջապէս ետ քաշուիլ սկսելով
մինչեւ Միլիի նահանդը հասաւ: Հոն ձմեռը վրայ
հասնելով արգիլուեցաւ: Այն ժամանակ Ճէրահ
եկլիտ ամիրապետին դիր գրելով իր նեղ վիճակն
իմացուց և օդնական զօրք խնդրեց: Եկղիտ խոս-
տացաւ զրկել, բայց խոստումը կատարելէ առաջ
մեռաւ Հիճրէթի 105 շապան ամսոյ 24 (Փրկչ 724)
թուին: Եկղիտի յաջորդը՝ Հիշամ՝ հաստատեց
զՃէրահ իւր պաշտօնին մէջ և օդնութիւն զրկել
խոստացաւ:

ՆԱՆՈԹՈՒԹԻՒՆ

Դեռնդ կը պատմէ այս անցքերը, բայց ոչ
այսչափ մանրամասնօրէն։ Յօհաննէս կաթողիկոս
բնաւ չյիշատակեր։

ԻՊԵ ԻԻԼ ԱԹԻՐ ՀԱՏ Ե՛ ԵԲ 50

Հիճրէթի 105 (Փրկչ. 724—725) թուխն, Ճերահ
Հէքէմի՝ Ալանաց երկիրն արշաւեց, և Պուլզարաց
երկրէն անդին շատ քաղաքներ ու ամուրներ նը-
ւածելով՝ բազում աւար առաւ։

ԻՊԵ ԻԻԼ ԱԹԻՐ ՀԱՏ Ե՛ ԵԲ 54

Հիճրէթի 106 (Փրկչ. 724—725) թուխն Ճերահ
Ալանաց երկիրն արշաւելով՝ հարկատուութեան են-
թարկեց զանոնք և հաշտութիւն կնքեց։

ԻՊԵ ԻԻԼ ԱԹԻՐ ՀԱՏ Ե՛ ԵԲ 55.

Հիճրէթի 107 թուխն՝ Ապտիւմէլիքի որդի Հի-
շամ ամիրապետը Ճերահ Հէքէմին Հայաստանի և
Ատրապատականի ոստիկանութենէն ձգեց, և անոր
տեղ իր Մէսլէմէ եղբայրն անուանեց։

ԻՊԵ ԻԻԼ ԱԹԻՐ ՀԱՏ Ե՛ ԵԲ 56.

Հիճրէթի 108 թուխն, Թուրքաց Խագան թա-
գաւորին որդին՝ Ատրապատական արշաւելով՝ քա-
նի մը քաղաքներ պաշարեց։ Հարիթ որդի Ամրի
անոր դէմ ելնելով վանեց և Թուրքերն հալա-
ծեց. բայց Երասխ դետն անցնելուն պէս՝ Թուր-
քերն ետ դարձան և պատերազմը նորոգեցին.
սակայն նորէն յաղթուելով շատերը ջարդուեցան։

ԻՊՆ ԻԻԼ ԱԹԻՐ ՀԱՏ. Ե. ԵԲ. 58

Հինգըթի 109 թուխն Մէսլէմէ որդի Ապտիւլ-
մէլիքի պատերազմեցաւ Թուրքաց հետ Ատրպա-
տականի մէջ, և բազում աւար և գերի առաւ ա-
նոնցմէ :


ԻՊՆ ԻԻԼ ԱԹԻՐ ՀԱՏ. Ե. ԵԲ. 61.


Հինգըթի 110 (Փրկչ. 728—729) թուխն Մէսլէմէ
պատերազմեցաւ Թուրքաց հետ Սլանաց Դրան
մօաերը : Այս պատերազմն ամսոյ մը չափ տեղի
ետեւ, սաստիկ անձրւ մը դալով Թուրքաց Խագանն
ետ քաշուելու ստիպուեցաւ : Մէսլէմէ ալ ետ
դարձաւ :


ԻՊՆ ԻԻԼ ԱԹԻՐ ՀԱՏ. Ե. ԵԲ. 62.

Հինգըթի 111 թուխն Թուրքերն Ատրպատա-
կան մոտան, բայց Հարիթ որդի Խօմէրի անոնց դէմ
ելնելով՝ ի փախուստ դարձուց :

Նոյն տարին Հիշամամիրապետը ձերահ Հէքէ-
մին վերստին Հայաստանի ոստիկան անուանեց իր
Մէսլէմէ եղբօրը տեղ, զոր պաշտօնէն ձգեց : Ձե-
րահ Թիֆլիզէն ելնելով Խաղարաց երկիրն արշա-
ւեց, և անոնց Պէյտա քաղաքն առաւ : Յետոյ
դարձաւ : Այս ժամանակ Խաղարները միաբանե-
րով խոլամաց երկիրն արշաւեցին, և այս պատե-
րազմին մէջ ձերահ մեռաւ, ինչպէս որ յետոյ պի-
տի պատմենք :









0003984

0003992

0003993

